№ 87 ՈՒՐԲԱԹ 25 ԱՊՐԻԼԻ

1914

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ 25 ԱՊՐԻԼԻ № 87

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.

Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS. Rédaction du journal «MSCHAK».

ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 7 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

1914 Թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 Թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 ռուբլին, ՁՐԻԱԲԱՐ կը ստանան հետևեալ 2 գրքերից մէկն ու մէկը. «ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 Թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» վէպերը:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆ

Այսօր, ուրբաթ, ներկայ ապրիլի 25-ին, Գրական-Գեղագիտական Սալօնի տանտիկին,

ՁԱՐՈՒՀԻ ՆԱԶԱՐԵԱՆԻ

մահվան քառասունքի սգահանդէսին յարգանօք հրաւիրվում են, շնորհ բերել (Голов. пр. 41) Սալօնի մշտական այցելուները՝ արուեստագէտները, գեղագէտները, գրականագէտները, լրագրողներն իրանց ընտանիքներով, «Աղբիւր», «Տարազ» բաժանորդները և նրանք, որոնք յարգել են հանգուցեալի յիշատակը իրանց ներկայութեամբ ամբիծքին, յուղարկաւորութեամբ, թաղմանը և արտայայտել վշտակցութիւն զանազան գրութիւններով: ՍԿԻԶԲԸ 9 Ժ. ԵՐԵԿՈՅԵԱՆ:

առ. 54. 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ՇԷՆՔ

Կիրակի, ապրիլի 27-ին տեղի կունենայ

ՅՕԳՈՒՏ ՀԱՅՈՒՀԵԱՑ ՈՐԲԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՄԵԾ ԶԲՕՍԱՆՔ

հետևեալ ծրագրով. մանկական խաղեր, խմբական երգեր՝ որ կը կատարեն Որբանոցի սաները, սինեմատոգրաֆ, ֆօկուսնիկ, օդապարիկ, վիճակախաղ, պտի-ժէօ, ուդօչկա, օդակախաղ, спиральная башня, կօնֆէտի, ծաղիկներ, բուֆէտ զովացուցիչ ըմպելիներով:

◆ Այգում կը նուագեն երկու երաժշտախմբեր:

Մուտքի տոմսակը մեծերի համար—30 կ., երեխաների և աշակերտների համար—20 կ.:

առ. Սկիզբը ցեր. ժամը 4-ից: 371. 2—1

ՁԱՐՈՒՀԻ ՆԱԶԱՐԵԱՆԻ

դագաղին պսակ դնելու փոխարէն ազգականները յանձնել էին բժշկ. Բ. Նաւասարդեանին մի գումար, որ խորհրդակցելով ում հետ նա պատշաճ կը գտնէ, յաւերժացվի այդ գումարով Զարուհի Նազարեանի յիշատակը: Խորհրդակցութիւնը բարի համարեց լուսանկար կնոջ մահճակալի մօտ ս. ԷՋՄԻԱԾՆԻ («Աղբիւր»-«Տարազի» հրատարակութիւն, որ մինչև օրս սրանից աջողն ու շքեղը չը կայ) պատկերից ձեռք բերել հազար օրինակ և ուղարկել Ռուսաստանում հայոց բոլոր երկսեռ գիւղական, եկեղեցական ծխ., Թեմական դպրոցներին, Գէորգեան, Լազարեան ճեմարաններին, հայոց բոլոր վանքերին, հայկական բոլոր բարեգործական, քաղաքակրթական հաստատութիւններին, ընկերութիւններին՝ իրանց ճիւղերով, գրադարաններին, պարբերական հրատարակութիւնների խմբագրութիւններին եւ ներկայ 1914 Թ. Գէորգեան ճեմարանը, Թեմական եւ օրիորդական միջնակարգ (Գայեանեան, Յովնանեան, Ղարաբաղի, Ալէքսանդրօպոլի, Ախալցխայի, Գօգոյեան և այլն VI և VII դասընթացեալ) դպրոցներն աւարտող բոլոր աշակերտուհիներին եւ աշակերտներին: Պատկերները կուղարկվեն յատուկ խողովակներում զետեղված, պօստով, պատուիրված կապոցներով և 1000 օրինակ ուղարկելու ծախսը բոլորը վճարված:

Թեմական սրբազան առաջնորդներին այսու յարգանօք խնդրվում է փութով ուղարկել իրանց թեմերում եղած բոլոր ուսումնարանների, վանքերի ցուցակը մանրամասն հասցէներով և միջնակարգ երկսեռ դպրոցներում ներկայ 1914 Թ. աւարտող աշակերտուհիների և աշակերտների անունները, որպէս զի մինչև առաջիկայ մայիս ամիսը ամենքին ուղարկված լինեն այս նուէրները:

Հասցէ՝ Тифлисъ, Бюро Печати, Головин. пр. 41. (առ.) 54. 1—1

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳ. ԸՆԿ. ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Նշանակված է շաբաթ, մայիսի 3-ին, երեկոյեան ժամը $7^1/_2$-ին Ընկ. դահլիճում (Աբաս-Աբադեան հրապարակ, № 7. ս. տ.)

Ընդհանուր ժողովի զբաղմունքի առարկաներն են.

1) Ընկ. կենտրոնի և ճիւղերի 1913 Թ. հաշիւների և գործունէութեան քննութիւնը վերստուգիչ յանձնաժողովի զեկուցման հետ և այդ հաշիւների հաստատութիւնը:
2) Մի քանի ճիւղերի նախահաշիւների քննութիւնը և հաստատութիւնը:
3) Զեկուցումն գրքերի և դպրոցների պիտոյքների պահեստի բացման մասին:
4) Զեկուցումն Խուդադեան ապաստարանի մասին:
5) Ընտրութիւն խորհրդի 4 անդամի՝ հերթով հեռացող իշխանուհի Մ. Թումանեանի, տ. Հ. Առաքելեանի, Ս. Յարութիւնեանի և Յ. Շահնազարեանի փոխարէն, 2 փոխանդամի, վերստուգիչ յանձնաժողովի 3 անդամի և 2 փոխանդամի:
6) Ընթացիկ հարցեր:

առ. (մ. 1, 3.) 369. 3—1



ՑԻՐԿ

Փ. ԻՒՊԱՏՕՎԻ

Միխայլովսկի պր. № 189, Մուշտայիդի մօտ:

Այսօր, հինգշաբթի, ապրիլի 25-ին, կը կայանայ ծաղրածուական մեծ ներկայացում: Ծիծաղի և հաճոյքի երեկոյթ! Այսօր ամեն ինչ գիտենք, ամեն ինչ կը տեսնենք և հասարակութեան կը պատմենք բոլորը! Այսօր մասնակցում են բոլոր չէկերը, կլօունները, երգիծաբանները, երաժիշտ-էկսցենտրիկները: Բրօուն անունով կոմիկ ընտանիքի առաջին դէբիւտը: Օրվայ չարլիքի շուրջ խօսող էկսցենտրիկները կը կատարեն մի շարք նոր բաներ: Ուրախ տրամադրութիւն ստեղծող բուֆ-չէկ Ճիտսօնը կը կատարէ խիստ ծիծաղաշարժ անոր ը: Այսօր մասնակցում է ամբողջ խումբը ցիրկի դիրեկտոր Իւպատովի գլխաւորութեամբ: Ազդ.—Կիրակի, ապրիլի 27-ին, կը կայանայ տօնական 2 ներկայացում: Ցերեկը՝ յատկապէս երեխաների և աշակերտութեան համար: Ցերեկվայ ներկայացման սկիզբը ժամը 2-ին:

Ցիրկի վերատեսուչ՝ Փ. Իւպատօվ

Կառավարիչ՝ Լ. Խունդաձէ

առ. 367. 1—1

ԲԺԻՇԿ

Մ. Կ. ՄԱՐՈՒՔԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ

Սիֆիլիս, վեներական եւ կաշուի հիւանդութիւնների:

Սրսկումն «606»-ի և «914»-ի:

Ընդունելութիւն (առ. ժ. 1—2 / եր. ժ. 5—8)

Ելիզաւետինսկայա փ. № 39. տ. Ջաղէթեանի:

Տէլէֆօն № 9—17.

(չ. ու. կ.) առ. 901. 100—65

ԴԻԼԻՋԱՆ

ՅՈՒՆԻՍԻ 1-ԻՑ ԲԱՑՎՈՒՄ Է ՋՐԱԲՈՒԺԱՐԱՆ: Բժ. Յ. Մելիք-Նուբարեանի հսկողութեան տակ:

Նոյն տեղում Բարեգ. Ընկ. Վարչութիւնը բացել է գրասենեակ (Բիւրօ) ամարանոց վարձողներին տեղեկութիւններ տալու համար բանաւոր և գրաւոր:

առ. (մ. 1 4) 370. 3—1

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՂԷՏ

Աղէտը, որ իջաւ Երևանի նահանգի ազգաբնակութեան գլխին, երբ սառնամանիքից ոչնչացան բոլոր այգիները, բամբակի և այլ ցանքսերը, պէտք է գրաւէ մեր խորին ուշադրութիւնը:

Աղէտի ենթարկված է Երևանի նահանգի ոչ թէ մի աննշան մասը, այլ մի մեծ տարածութիւն, հետևաբար, աղէտից վնասվել է ազգաբնակութեան նշանաւոր մասը, մանաւանդ գիւղական ազգաբնակութիւնը, որի տնտեսական հիմքը քայքայվում է հողագործական բերքերի ոչնչացմամբ:

Ուրեմն մենք կանգնած ենք մի ժողովրդական ընդարձակ աղէտի առաջ:

Պէտք է մտածել և միջոցներ ձեռք առնել ժողովրդական աղէտը ամոքելու և հետևանքները մեղմելու:

Ո՞վ պէտք է յանձն առնի այդ պարտականութիւնը:

Ամենից առաջ, ի հարկէ, կառավարութեան վրա ընկնում է պարտականութիւն ընդհանուր պետական միջոցներով հասցնել աղէտից վնասված ազգաբնակութեանը օգնութիւն: Եւ մենք հաւատացած ենք, որ մեր երկրի փոխարքայ կոմս Վօրօնցօվ-Դաշկօվ, որ համանման դէպքերում մտել է ժողովրդի դրութեան մէջ, իր ուշադրութեան և հոգածութեան առարկայ կը դարձնէ աղէտի ենթարկված շրջանի դրութիւնը: Սակայն պետական կամ կառավարչական օգնութեան հետ միասին, անհրաժեշտ է և հասարակական օգնութիւն. իսկ այդ օգնութիւնը կազմակերպելու համար պէտք է նախ և առաջ որոշել աղէտի ծաւալը, չափը, որպէսզի ըստ այնմ ևս դարման տանվի աղէտին:

Այդ նկատումով պէտք է աղէտի ենթարկված վայրերում որոշ մարմիններ, օրինակ, հայերի վերաբերմամբ, տեղական առաջնորդները կամ յաջորդները և փոխանորդները, բարեգ. ընկ. ճիւղերը, իսկ որտեղ չը կան այդպիսիները, ուսուցիչներ կամ ինտելիգենտ երիտասարդներ աշխատեն մանրամասն տեղեկութիւններ ժողովել աղէտի ենթարկված տեղերի, գիւղերի, չափի մասին և հրատարակել այդ տեղեկութիւնները:

Ինչպէս կը տեսնենք «Մշակի» այսօրվայ համարում տպված լուրից, Կ. Հ. Բարեգ. Ընկերութեան կենտրոնը դիմել է ձեռնհաս անձանց և իր՝ ճիւղերին այդ մտքով: Եւ երբ անհրաժեշտ տեղեկութիւններ հաւաքվեն, նոյն ընկերութիւնը կարող է գլուխ կանգնել օգնութեան գործի կազմակերպութեան:

Ներկայ աղէտը պերճօրէն ցոյց է տալիս մի յատուկ նպաստամատոյց ընկերութեան անհրաժեշտութիւնը, որ նպատակ ունենար յատկապէս ժողովրդական աղէտների ժամանակ աղէտեալներին օգնութեան հասնել և միջոցներ որոնել՝ մեղմելու աղէտների հետևանքը և նոյնիսկ գալիք աղէտների առաջն առնելու գիտութեան թելադրած միջոցներով: Այդպիսի մի ընկերութեան կանոնադրութիւն թէև նոյնիսկ հաստատվեց անցեալ տարի և ենթադրութիւն կար նախկին Նպաստամատոյց Յանձնաժողովից մնացած դրամագլուխը յանձնել նրան, բայց, զանազան պատճառներով, հնարաւոր չեղաւ իրագործել այն: Ցամենայն դէպս, եթէ հարկ լինի մի յատուկ կազմակերպութիւն այն դէպքում, եթէ Բարեգործ. Ընկեր. չը ստանձնի գործի ղեկավարութիւնը, կարելի է նորից կեանքի կոչել նախկին Նպաստ. Յանձնաժողովը կամ բանալ նոր ընկերութիւն արդէն հաստատված կանոնադրութեամբ:

Բայց ամենից շատ և ամենից առաջին մտածողը պէտք է լինի Գիւղատն. Ընկերութիւնը, իբրև մի հաստատութիւն, որ կոչված է յատկապէս գիւղացիութեան կարիքների մասին մտածելու: Նա պէտք է ամենից առաջ հանդէս գար և ամենից առաջ իր ձայնը բարձրացնէր:

Արդեօ՞ք ողբացեալ Ալ. Քալանթարի մահվամբ պէտք է այդ ընկերութեան գործունէութիւնը անդամալուծված համարենք:

Դա ցաւալի կը լինէր:

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—o—

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

«Рус. Сл.»-ի Թիֆլիսի Թղթակիցը հեռագրում է.

«Հայաստանից հաղորդում են, որ քիւրդերը նորից պատրաստվում են ապստամբութեան: Յայտնի Սէիդ-Ալին Վանի վիլայէթում խորհրդակցում է աշիրաթպետների հետ: Էրզրումում նոյնպէս ժողովվել են խորհրդակցութեան համար շրջակայ քիւրդերի ցեղապետները: Դէրսիմում յուզմունքներն արդէն լուրջ կերպարանք են ստացել: Երզնկա են ուղարկված հեծելազօր, իսկ Բէյրութ—Թնդանօթաձիգ վաշտ՝ քիւրդերին զսպելու համար»:

—

Էրզրում է եկել, «Р. Сл.»-ի Թղթակցի ասելով, ֆրանսիացի մի կապիտան Վանի և Բիթլիսի վիլայէթներում ժանդարմերիա կազմելու համար: Բացի դրանից, հրաւիրված են նաև երկու այլ ֆրանսիացի օֆիցէր: Ֆրանսիացի գեներալ Բօման-փաշան, ժանդարմերիայի վերակազմութեան վրա վերահսկողը, արդէն ձեռնարկել է ճանապարհորդութեան Հայաստանում:

—

Կ. Պոլսից հեռագրում են. «Ի պատասխանի քիւրդական պարագլուխների հեռագրական այն յայտարարութեան, թէ նրանք զէնքերը վայր կը դնեն, երբ քիւրդերին ևս կը տրվեն հայերի հետ հաւասար ազգային իրաւունքներ, կառավարութիւնը յայտնեց, որ այժմ, ի նկատի ունենալով դրութեան դժուարութիւնը, ժամանակը չէ վէճեր երևան մահմեդականների միջև, և խոստացաւ ընդառաջել քիւրդերի ցանկութիւններին, եթէ քիւրդ պատգամաւորները այդ հարցը յարուցեն պարլամենտում»:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

23 ապրիլի

ԼԻՎԱԴԻԱ.—Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնայի անուանակոչութեան օրը Բարձրագոյն ներկայութեամբ մատուցվեց հանդիսաւոր պատարագ, կատարվեց մաղթանք և տեղի ունեցաւ զօրահանդէս, որից յետոյ Բարձրագոյն նախաճաշ, որի ժամանակ կայսրը խմեց կայսրուհու կենացը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Վախճանվեց Պետերբուրգի համալսարանի նախկին ռեկտոր և Մոսկվայի ուսումնարանական շրջանի նախկին հոգաբարձու Ժդանովը:

Այսօր, Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնայի անուանակոչութեան օրը, բոլոր եկեղեցիներում, պետական հաստատութիւններում, զօրամասերում հանդիսաւոր պատարագ մատուցվեց:

Ժողովրդական առողջարանութեան մասնաժողովը ընդունեց Թոքախտի դէմ մաքառելու համար նպաստ տալու նախագիծը:

Պետերբուրգի Գործակալութիւնը պետութեան զանազան քաղաքներից, ինչպէս և արտասահմանից հեռագիրներ ստացաւ՝ Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնայի անուանակոչութեան օրը հանդիսաւոր մաղթանքներ կատարելու մասին:

ՕԴԵՍՍԱ.—Օդագնաց Եֆիմօվը մի քանի անգամ աջող թռիչք կատարեց գլխիվայր:

ՆՈՎՕՉԵՐԿԱՍԿ.—Մօտ 30 շինական հասարակութիւն միջնորդել են փակել արքունի գինետները:

Կ. ՊՈԼԻՍ.—Կ. Պոլսի վրայով շոգենաւով մեծ թւով յոյն ընտանիքներ Մակեդոնիայից մեկնում են Կովկաս: Գաղթականները յոյս ունէին թէ ձեռնտու պայմաններում բնակութիւն կը հաստատեն մահմեդականներից թողնված հողերի վրա, բայց հիասթափվեցին:

ՎԻԵՆՆԱ.—«Կոր. Բիւրօյին» հաղորդում են Դուրացցօյից, որ 200 մահմեդական-ալբանները, որոնք փախել էին էպիրոսացիներից՝ Գօրմօվից, գերել և, Կորդ գիւղը քշելով, խաչել են տեղական ուղղափառների եկեղեցում. յետոյ եկեղեցին հրդեհվել է: Ալբան ժանդարմները գտան ածխացած դիակներ: Դուրացցօյում տիրում է յուզմունք:

ԼԷՅՊՑԻԳ.—Հանդիսաւորապէս բացվեց գրքերի արդիւնաբերութեան միջազգային ցուցահանդէսը սաքսոնական թագաւորի, պետական և սաքսոնական իշխանութիւնների ներկայացուցիչների, արտասահմանեան ցուցահանդիսային կոմիսարների ներկայութեամբ: Ցուցահանդէսում, բացի աւստրիական բաժանմունքից, բոլոր մնացած բաժանմունքների կառուցումը դեռ աւարտված չէ: Ռուսական պավիլիոնը շինված է բիւզանդական ոճով ակադեմիկոս Պօկրօվսկիի նախագծով, որ և կառուցել է Լէյպցիգի ուղղափառ եկեղեցին:

ԲՈՒԴԱՊԵՇՏ.—Աւստրիական պատգամաւորութեան արտաքին գործերի մասնաժողովում սկսվեց արտաքին գործերի մինիստրութեան նախահաշւի քննութիւնը: Տեղեկաբերը մատնանշեց, որ Անգլիայում նորից երևան է գալիս նախկին բարեկամութիւնը դէպի միապետութիւնը: Բէրնրէյտէրը ողջունեց Գերմանիայի և Անգլիայի մերձեցումը և ցանկացաւ, որպէս զի Աւստրօ-Ունգարիայի և Ռուսաստանի յարաբերութիւնները այնպէս լինեն, ինչպէս ասված է Բերխտօլդի հաղորդագրութեան մէջ:

ՏՐԻԷՍՏ.—Քաղաքային խորհուրդը քննեց սլօվենցիների և իտալացիների միջև մայիսեան տօնին տեղի ունեցած ընդհարումը: Վիճաբանութիւնների ժամանակ իտալացիք յարձակվեցին կառավարութեան վրա, որ չէր արգելել սլօվենցիների երթը: Սլօվէն Վիլֆանի ճառի ժամանակ բարձրացաւ սարսափելի աղմուկ, յետոյ իտալացիք սկսեցին հրել սլօվեններին: Ձեռնամարտի մէջ սլօվէն պատգամաւոր Ռիբարշը ստացաւ բռունցքի հարուած դէմքին. նիստը ընդհատվեց:

ՎԵՐԱԿՐՈՒԶ.—Լուրերի համաձայն, Սան-Ֆրանցիսկոյի ճանապարհին երկու կամուրջ յօդս են ցնդեցրել:

ՊՕՐՏ-ՍԱԻԴ.—Երուսաղէմից Թռան Թիւրք օդագնացներ Սէլիմ-բէյը և Քէմալ-բէյը:

ԳԷՆՈՒԱ.—Գերմանական կայսերական զոյգը «Հօհէնցօլերնով» ժամանեց:

ՎԻԷՆՆԱ.—Կայսրի առողջութիւնը լաւանում է:

ՀՌՈՄ.—Պարլամենտի նիստերը վերսկսվեցին:

ԲՐՆՕ.—Ճանապարհորդական և ապրանքատար գնացքների ընդհարման ժամանակ վիրաւորվեցին աւելի քան 30 հոգի:

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Կ. Պոլսից հեռագրում են, որ Բ. Դուռը մի քանի ռազմանաւի պատուէր է տուել գերմանական և ամերիկական ֆիրմաներին: Բոլոր պաշտօնեաներին և օֆիցէրներին և առհասարակ պետական ծառայութեան մէջ գտնվող անձանց պատուիրագրված է առանձին տուրք վճարել նաւատորմի վերակազմութեան գործի համար:

◆ Կ. Պոլսից հեռագրում են, որ ռուսաց դեսպանատան և Բ. Դրան միջև սկզբունքով լիակատար համաձայնութիւն կայացաւ Թիւրքիայում կերոսինի, ալկոհոլի, լուցկու, ծխախոտի թղթի ու խաղաթղթերի մենավաճառութիւն մտցնելու հարցի առիթով այնպէս, որ ռուսական ներմուծումը համապատասխան է լինելու այն տոկոսին, որ այժմ յիշեալ ապրանքները ունեն Թիւրքական շուկայում:

◆ Բուլղարական «Միրը» հրատարակել է գաղտնի վաւերագրեր, որոնք վկայում են, որ Բուլղարիայի կործանման պատճառը Աւստրիան է, որ չը միացաւ Ռուսաստանի հետ Թիւրքաց արշաւանքը կանգնեցնելու և Ադրիանուպոլիսն ու Թրակիան Բուլղարիայի օգտին պահելու համար:

◆ «Н. Вр.»-ի Սօֆիայի Թղթակիցը հեռագրում է, որ բուլղարական նոր փոխառութիւնը Գերմանիայում գլուխ չի գայ: Արգելքներ են երևացել մի քանի դիւանագիտական շրջանների կողմից:

◆ Թէհրանից հեռագրում են, որ 100 կօզակները, որոնք Կազերունից մեկնել էին կարավանները կողոպտող աւազակներին հալածելու համար, վերադարձան, կրելով պարտութիւն և կորցնելով 8 սպանված:

◆ Մէկսիկայից հեռագրում են, որ ապստամբների միութիւնը վիժեց: Խուէրտան ապաստանել է օտարազգի շոգենաւում.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ. ԱՂԱՅԵԱՆԻ ՅՈԲԵԼԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ

Ինչպէս յայտնի է, դերասան Աղայեանի բեմական գործունէութեան 35-ամեակի օրը ստացվել էին շնորհաւորական հեռագիրներ։ Անհետաքրքրական չի լինի բերել դրանցից մի քանիսը։

«Թանկագին ընկեր Մաթէոս, այս երջանիկ օրին, թող մոռացվեն չարքաշ կեանքիդ տխուր օրերը. ընդունիր համբոյրս, որ այս րոպէիս դրօշմում եմ համեստ ճակատիդ»։ Սիրանոյշ

«Շնորհաւորում եմ մայրենի բեմի աշխատաւոր անդուլ յօբելեարին։ Ալ. Շատուրեան

Շնորհաւորական հեռագիրներ ստացված են, ի միջի այլոց, և հետևեալ անձերից. դրամատուրգ Ալ. Աբէլեանից, Մկրտումեան քահանայից (Աստրախան), Բագուի Հայոց Կուլտուրական Միութեան Թատրոնական սեկցիայից, «Թատրոն և երաժշտութիւն» հանդէսի խմբագրութիւնից, ընկեր դերասաններից, Թատերասէրների խմբերից և Թիֆլիսի, ինչպէս նաև դրսի մի քանի հայկական հաստատութիւններից և անձերից։

Բացի դրանից յօբելեարին նուէր տրվեց մի դափնեայ պսակ Թիֆլիսի Արտիստական Ընկ. կողմից։ Ինչպէս յայտնում են, եղել են և մի քանի դրամական նուէրներ։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

Բիւջէի քննութիւնը*)

Պետերբուրգ, 22 ապրիլ

Մինիստրների խորհրդի նախագահը հետևեալ յայտարարութիւնն է անում.

«Պետական Դումայի պարոնայք անդամներ. ես չը գիտեմ, թոյլ կը տան, արդեօք, ինձ շարունակել խօսել։ Մենք այսօր հաւաքվել ենք այստեղ նրա համար միայն, որ լսենք այս տարվայ պետական եկամտի գործը։ Այժմ ձեր առաջ հանդէս կը գայ ֆինանսների մինիստրութեան կառավարիչը և կասէ իր խօսքը այդ գործի առիթով, իսկ ես թոյլ կը տամ ինձ ձեր ուշադրութիւնը զբաղեցնել մի քանի կարճ րոպէով, որովհետև ես չէի կամենայ, որպէս զի իմ առաջին երևալը ձեր մէջ անցնէր իմ կողմից կատարեալ լռութեամբ։

«Ամենից առաջ, ես կամենում եմ, չը նայած այսօր տեղի ունեցած ցաւալի դէպքերին, ողջունել Պետական Դուման և խնդրում եմ ձեզ բոլորիդ, Նրա պարոնայք անդամներիդ, ընդունել այդ ողջոյնը միևնոյն բարեացակամ զգացմունքով, ինչպէս ես այն ուղղում եմ (ծափեր կենտրոնում և աջից)։ Յետոյ ես պէտք է յայտնեմ ձեզ, որ իմ դռները միշտ բաց են ձեզանից իւրաքանչիւրի համար, առանց որևէ խտրութեան։ Մեր ուղղակի յարաբերութիւնները կարող են ամեն կերպ նպաստել, որպէս զի վերանան ամեն տեսակ աւելորդ լուրերը, անհիմն խօսակցութիւններն ու թիւրիմացութիւնները և ամեն տեսակ անհարկաւոր ենթադրութիւնները։ Ես չեմ կամենում իմ կարծիքները թագցնել, ես հրապարակելուց չեմ վախենում։

«Յետոյ, պարոններ, ես կը կամենայի ձեզ մի ցանկութիւն ևս յայտնել, բայց, ճիշդն ասած, ես փոքր ինչ քաշվում եմ դարձուածքների գործածութիւնից։ Իմ ցանկութիւնը շատ հասարակ է. նա կայանում է միացեալ ու համերաշխ աշխատանքի մէջ. սակայն ես վախենում եմ, որ, չը նայած իմ ցանկութեան բովանդակ անկեղծութեան, իմ խօսքերին տրվի այնպիսի մեկնութիւն, որպիսին բնաւ չէ համապատասխանում իմ մտադրութիւններին։ Ես ուղղակի կասեմ. ես կը կամենայի, որպէս զի մենք օր առաջ հասկանանք իրար, որպէս զի մեզանից ամեն մէկը օրինական սահմաններով որոշված պարտականութիւնների շրջանում բոլորովին հանգիստ նուիրէ իր բոլոր ոյժերը մեր մեծ հայրենիքի աշխատանքին» (ծափահարութիւն աջից և կենտրոնում, սուլոց ձախից)։

Ֆինանսների մինիստրութեան կառավարիչը մի ժամ տևող ճառով կանգ է առնում մեր ֆինանսական քաղաքականութեան գլխաւորագոյն խնդիրների վրա։ Յունվարի 30-ին հրատարակված Բարձրագոյն ռեսկրիպտը պարզօրէն ցոյց է տալիս այն ճանապարհը, որով կարելի է հասնել ժողովրդական բարեկեցութեանը։ Անկասկած, Դուման՝ առանց հայեացքների ու կուսակցութիւնների խտրութեան՝ եռանդով արձագանք կը տայ ժողովրդական բարիքի ու բարգաւաճման այդ մեծ կոչին (ծափեր, ձայներ՝ «բրաւօ»). դժուար խնդիր կայ առաջիկայում ոչ միայն ֆինանսների մինիստրութեան, այլ և ամբողջ կառավարութեան համար։ Այդ խնդիրը կարող է ահագին չափով դիւրանալ օրէնսդրական պալատների, հասարակական հաստատութիւնների և տեղական կազմակերպութիւնների աջակցութեամբ։

«Մեծ չարիքի դէմ կռւի միջոցները պէտք է ուղղված լինեն ամենից առաջ վերացնելու գայթակղութիւնը, երկրորդ՝ բարձրացնելու ժողովրդի կուլտուրական ու բարոյական մակարդակը։ Ժողովրդին ապաքինելու հետ միասին կուժեղանայ նրա աշխատանքի ընդունակութիւնը, որը և կաւելացնէ պետական գանձատան հասոյթները։ Անհրաժեշտ է կռիւ մղել ժողովրդական արբեցողութեան դէմ, զարգացնել Ռուսաստանի արտադրիչ ոյժերը, կանոնաւոր հիմքերի վրա դնել բօրսային գործունէութիւնը, զարկ տալ գիւղատնտեսութեանը, հիմնել հացահատիկների շտեմարաններ, գիւղատնտեսական բանկեր, բարելաւել ճանապարհների հաղորդակցութիւնը, բայց և միևնոյն ժամանակ, մինիստրի ասելով, Ռուսաստանը անկարող է կանգնեցնել պետական պաշտպանութեան համար անհրաժեշտ ծախքերը։ Ապա ընդգծելով մանր վարկի կօօպերատիվ հաստատութիւնների զարգացումը, որոնց ֆինանսների մինիստրութիւնը տալիս է առաջնակարգ նշանակութիւն, Բարկը ասում է, որ նա ամեն միջոցներով աշխատելու է աւելի ևս ընդարձակելու ժողովրդական խնայողական գանձարանների գործունէութեան շրջանը. առ. 1-ն յունվարի Ռուսաստանում կային 8500 խնայողական գանձարաններ և 25,000 արքունի խմիչքատներ։ Մինիստրութիւնը ամեն ջանք գործադրելու է, որ այդ խմիչքեղէնների կրպակները փակվեն, իսկ նրանց տեղ բացվեն խնայողական գանձարաններ (ծափեր կենտրոնում և աջից)։

«Ես խորապէս հաւատում եմ,—աւարտում է մինիստրը,—Ռուսաստանի ոյժին, նրա բնութեան անսպառ հարստութիւններին և ռուս ժողովրդի բացառիկ ընդունակութեանը (ծափեր աջից, «բրաւօ»)։ Ես անյողդողդ հաւատացած եմ, որ իր գործունէութեան մէջ՝ ուղղված ժողովրդական բարեկեցութիւնը բարձրացնելուն՝ մինիստրութիւնը միշտ կը գտնէ անհրաժեշտ աջակցութիւնը օրէնսդրական հաստատութիւնների կողմից։ Ես յոյս եմ դնում ձեր բարեացակամ և, հաւատում եմ, անկողմնակալ քննադատութեան վրա, որին ես կանգնած խորագոյն ուշադրութեամբ» (ծափ. աջից և կենտրոնում)։

Շինգարեվը արտասանում է երկու ժամից աւելի տևող ճառ։ Մատնանշելով, որ այս տարվայ բիւջէտային վիճաբանութիւնները ունենալու են բացառիկ կարևորութիւն և ընդգծելով, որ Դումայի բիւջէտային իրաւունքները—առանց այն էլ սահմանափակ—շարունակ խախտվում են առաջվայ նման, հռետորը դիմում է ֆինանսների մինիստրի ճառի քննադատութեան։

Այն ցուցմունքը, թէ եկամուտները աւելի են ծախքերից, սոսկ պատրանք է, որովհետև ծախքերի մէջ մուծված չեն նախահաշւից դուրս եղած այն խոշոր ծախքերը, որոնք չափազանց աճել են յընթացս նոր օրէնսդրական հաստատութիւնների գոյութեան։ Օրինակի համար՝ հռետորը յիշեցնում է, որ նաւատորմի համար յատկացված գումարների քննութեան ժամանակ նախկին մինիստր Կոկօվցէվը ներկայացրեց ծախքերի ենթադրելի աճման ցուցակ, և նրանում մատնանշեց, թէ մեր ծախքերը 1920 թւին կը կազմեն 3 միլիարդ 600 միլիօն, իր՝ հռետորի հաշւով 1914 թ. այդ ծախքերը պէտք է հաւասարվէին 3 միլիարդ 400 միլիօնի. մինչդեռ իսկապէս արդէն 1914 թ. նրանք կազմում են 3 միլիարդ 600 միլիօն։ Այդպիսով ծախքերի աճումը աւելի երևաց ոչ միայն ֆինանսների մինիստրի, այլև հռետորի սպասածից։ Այդ աճումը շուտով մեզ հանելու է ֆինանսական հաւասարակշռութիւնից։

Մինիստրի այն ցուցումը, թէ կուլտուրական պէտքերի համար կատարվող ծախքերը աճում են աւելի արագ, քան ժողովրդական պաշտպանութեան ծախքերը, սխալ է, որովհետև մինիստրը հաշւի է առնում միայն սովորական ծախքերը և ուշադրութեան է առնում եկամուտը, այլ ոչ թէ դրա կատարումը, և մոռանում է ռազմագիտական երկաթուղիները։ Եթէ այս ամենը ուշադրութեան առնենք, կերևայ, որ պետական պաշտպանութեան ծախքերը աւելացել են $6^{0}/_{0}$-ով, իսկ կուլտուրական ծախքերը սոսկ $5^{0}/_{0}$-ով։

Դիմելով այն հարցին, թէ ինչով կարելի է ծածկել օր-աւուր աճող ծախքերը, հռետորը կանգ է առնում օղու ու արքունի երկաթուղիների հարցերի վրա և այն եզրակացութեան է յանգում, որ երկաթուղային եկամուտը պակասելու է, իսկ օղու մենավաճառութեան եկամտի պակասումը ֆինանսների մինիստրի անմիջական խնդիրն է կազմում։ Այդ խնդիրը «պետական պաշտպանութեան համար փող տուր, իսկ ծախքերը կրճատի՛ր» հակասական է։

Խօսելով ժողովրդական-տնտեսական կեանքի մասին, Շինգարեվը մատնանշում է, որ ինքը յենվում է մեզ մօտ գիւղատնտեսութեան վրա, որին Գերմանիայի հետ 1904 թւին կապված առևտրական պայմանագիրը ուժեղ հարուած հասցրեց։ Պատերազմից թուլացած Ռուսաստանը անկարող եղաւ դիմադրել և բոլոր կէտերում զիջեց Գերմանիային. իսկ ա՞յժմ։ Մօտենում է առևտրական պայմանագրի վերաքննութեան ժամանակը, Գերմանիան կրկին կանգնած է մեր առաջ կազմ-պատրաստ, յենվելով հասարակական կարծիքի վրա, իսկ մեզ մօտ կառավարութիւնը տակաւին արժանի չէ գտել քննել առևտրական պայմանագրի հարցը մինիստրների խորհրդի մէջ։ Շեշտելով բանկերի և արդիւնաբերական սինդիկատների կապի վնասակար ազդեցութիւնը ժողովրդական տնտեսութեան համար, հռետորը երկիւղ է յայտնում, թէ առաջ են գալու ծանր տնտեսական տագնապներ երկրում։ Մինիստրների խորհրդի նախագահը հրաւիրում է Դումայի անդամներին մտնել իր մօտ, որպէսզի այդպիսով արգելք լինի գանազան թիւր մեկնութիւններին։ Շինգարեվը կարծում է, որ ամեն տեսակ թիւր մեկնութիւնների հերքումը պէտք է լինի Դումայի ամբիոնից։

Վերջում հռետորը քննադատում է կառավարութեան ընդհանուր քաղաքականութիւնը։ (Հ. Գ.)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Առաջադիմութեան ճամբին

Գիւլագարակ, 15 ապրիլ

Գիւղիս մի քանի երիտասարդներ թողել են իրանց ճոխ ամսականները և գիւղ դարձել հողին փարելու. Նրանք գիւղատնտեսական կուլտուրայի մի քանի ձեռնարկութիւններ պիտի սկսեն օրինակ ծառայելու նահապետականութեան մէջ գրեթէ մրափած գիւղացուն։ Այս գարնան, մի անսովոր ոգևորութեամբ մի կարգ գիւղացիներ նրանց հետևելով, գիտակցելով պտղատու ծառերի մշակութեան արդիւնաւորութիւնը, իրանց արդէն իսկ սակաւ հողամասերից տեղ են յատկացրել, կուլտ. պտղատու ծառեր են բերել ու բերում են, վայրի ծառեր են տնկում՝ պատուաստելու և այլն. այսպիսով ծառաբուծութեան տարածման մեծ զարկ է տրվում։ Սրանից 10 տարի առաջ գիւղումս ոչ մի պտղատու այգի չէ եղել, սակայն այսօր տասնեակ գիւղացիներ կան, որ ընդարձակ պտղատու ծառերի այգիներ ունեն և աչքի ընկնող բերք են ստանում, չը նայած Լոռու զով և ժլատ կլիմային։

Վերջերս պաշտօնապէս գրաւոր յայտնվեց գիւղիս տանուտէրին, որ Բօլագիրան-Ջալալօղլի-Վորօնցովկա-Կալօնկա խճուղին պիտի անցնի Գիւլագարակի միջով։ Շուտով կը սկսեն շինել։ Վերջինս մեծ խոչընդոտներ յաղթած լինելով մեծ ուրախութիւն է պատճառել արդիւնաբերութեան բարձրացման ծարաւի գիւղացուն, որը նախատեսում է նրա ապագայ բարեբեր ազդեցութիւնը գիւղի տնտեսական և կուլտ. զարգացման վրա։

Ռ. Իսկէնդէրեան

—

Գրիգոր Բալասանեանի յօբելեանը

Բաշգիւղ, 22 ապրիլ

Երէկ տեղիս «Զրաբաշխ» դպրոցի դահլիճում, նոյն դպրոցի հոգաբարձական կազմի նախաձեռնութեամբ և մի խումբ հասարակական գործիչների ու գիւղական համայնքներից ընտրված ներկայացուցիչների մասնակցութեամբ, տեղի ունեցաւ գաւառական գործիչ և մանկավարժ-ուսուցիչ Գր. Բալասանեանի յօբելեանական տօնախմբութիւնը։ Հանդէսի սկզբում ճառ արտասանեց յանձնաժողովի նախագահը և վեր հանեց յօբելեարի արժանիքները։ Նոյնպէս ճառեր արտասանեցին Զաքարիա և Սարգիս քահանաները և ուսուցիչները։ Մի գեղեցիկ ձօն կարդաց Մ. Մաղաթեանը։

Ճառախօսութիւններից յետոյ կարդացվեցին շնորհաւորական հեռագիրներ, նամակներ, ձօներ։

Վերջում յօբելեարը շնորհակալութիւն յայտնեց ներկայ եղողներին և մի տեսութիւն արեց հայ դպրոցի և հայ գրականութեան մասին։

Հանդէսը սկսվեց առ. ժամը 8-ից և վերջացաւ եր. ժ. 6-ին։

Հանդէսի ընթացքում որոշվեց կազմել մի գրական ֆօնդ յօբելեարի կազմած «Հայ գրականութիւն և հայ հեղինակներ» աշխատութիւնը հրատարակելու օգտին։

Տեղեակ

—

«Սպիտակ Ծաղկի» օրը մեզանում

Զաքաթալա, 21 ապրիլ

Երէկ, ամսիս 20-ին, առաջին անգամ տուբերկուլեօզ վարակիչ հիւանդութեան դէմ մաքառելու համար մեր քաղաքում կատարվեց «Սպիտակ Ծաղկի» օրը. ժողովուրդը շատ սիրով վերաբերվեց այդ մարդկային գաղափարին և ամեն ոք իր լուման գցում էր գանձանակը և ստանում «Սպիտակ Ծաղիկ»։ Քաղաքիս գլխաւոր հրապարակում նուագում էր արհեստաւորաց դըպրոցի աշակերտական նուագախումբը, փայլ ու բաւականութիւն պատճառելով հաւաքուող երկսեռ զբօսնողներին։

Մուտք եղաւ ընդամենը 188 ր. 87 կօպ. իսկ ծախք՝ 10 ր.։ Առաջին շնորհակալութեան արժանի են շրջանիս վարչութեան հաշւապահ М. Г. Скржинскій, հաշտարար դատաւոր П. Л. Лонго, օր. Մելիք-Ալլահվերդեան և օր. К. П. Сусщинская և պ. Տիգրան Հայրապետեանը, որոնք մինչև ուշ գիշեր շրջում էին տնէ-տուն, փողոցէ-փողոց և յօգուտ այդ նպատակի փող հաւաքում։

Սօյլադէ

ՋԻՎԱՆՇԻՐԻ ԼՐԱԲԵՐ

II

Նախորդ գլխում խօսեցինք Եւլախ-Շուշի երկաթուղագծի մասին, բայց ծրագըրված է և արդէն սկսված են նախնական հետազօտութիւններ և մի այլ գծի համար, որը սկսվելու է Գանձակ (ըստ ոմանց Գեօրան) կայարանից և, կտրելով Շուշու գիծը, անցնելու է Մուղանի անապատով դէպի Լէնքօրան-Աստարա, իսկ ըստ ոմանց մինչև իսկ Թէհրան։ Այս ծրագրով՝ գիծը անցնելու է Ջիվանշիրում գտնվող Մելիք-Բէգլարեանների «Խանագեան» և Դ. Աւան-Իւզբաշեանի «Մարգուշէն» ընդարձակ կալուածների միջով։ Այդ իսկ նպատակով վերջին ամիսներում շրջակայքում յաճախ երևում են ինժեներներ, որոնք զանազան ուղղութեամբ չափում-ձևում են։

Պէտք է շեշտել, որ Ջիվանշիրի գաւառը Կովկասի փարթամ և ճոխ շրջաններից մէկն է, որը իր մէջ պարփակում է դաշտային և լեռնային կլիմաներին յատուկ ֆլօրան և ֆաունան։

Ջիվանշիրը Թարթառ գետով բաժանվում է երկու մասի։ Գետի վերին հոսանքը անցնում է բնական լայնածաւալ, հրաշալի կուսական անտառներով։ Ահա այս անտառներում վերջին ժամանակներս գտնվել են քարածուխ, պղնձի և ալէբաստրի հարուստ հանքեր (հաւանական է համարվում և ոսկու գոյութիւնը), որոնք սպասում են միայն նախաձեռնող անձերի։

Այդպիսի ճոխ հանքերով, որոնց գոյութիւնը հաստատված է պաշտօնապէս, առատ է առանձնապէս Թարթառ գետի այն ափունքը, որը ընկած է Տօնաշէն գիւղին պատկանող վարելահողերի և շրջապատող արքունական անտառների միջև։ Եւ հանքատեղերի այդ շրջանում սկզբնական հետազօտութիւններ անելու թոյլտուութիւն է

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽՈՒՑԱԳՐԱՒ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ*)

Այժմ անցնինք ֆրանսական թերթերուն մէջ յայտնուած կարծիքներուն։

«Թան» լրագրի գրական քննադատը Պօլ Սուդէ նոր հրատարակութեանց ամենէն ուշագրաւները թուելով՝ կը գնահատէ «տեղական գոյնի ձիրքերը, յուզիչ հայրենասիրութիւնը, ժողովրդական զգացումը պ. Արշակ Չօպանեանի, որ հայազգի է և որ այս «Կեանք և Երազ» տիտղոսով հրատարակած արձակ քերթուածներէն առաջ՝ իր հայրենիքին ժողովրդական բանաստեղծութիւնը ծանօթացուցած էր մեզի շատ հրապուրիչ հատորներով»։

«Ֆիգարօյի» գրական քննադատը Ֆ. Էմմանուէլ Գլազէր կը գրէ. «Պ. Ա. Չօպանեան «Կեանք և Երազ» տիտղոսով կը հրատարակէ արձակ քերթուածներ, հէքիաթներ և ֆանթէզիներ, հայազգի բանաստեղծի մը արտադրութիւնները՝ շատ խորունկ և շատ փափուկ համով մը լեցուն։ «Ձեր գործը,—կըսէ հեղինակին՝ մեծ բանաստեղծ Էմիլ Վէրհարըն իր յառաջաբանին մէջ,—համակ զգայնութեամբ և երևակայութեամբ է շինուած, և ձեր հայրենիքը կը շնչէ ձեր մէջ։ Դուք թարգմանեցիք շատ մը ժողովրդական երգեր ու շատ քերթուածներ, զոր հայ ժողովուրդը նուիրագործած է՝ ողբերգական օրերու մէջ զանոնք յաճախ կրկնելով... Ձեր բոլոր քերթուածները էականապէս ֆօլքլօրական են, հոն ամեն ինչ հաւաքական է, ամեն ինչ հոն զգացուած՝ սերունդներուն մէջէն՝ մէկու մը կողմէ, որ զանոնք իր մէջ կամփոփէ և կը խտացնէ»։

«Ռեւբրիք Նուվէլ» հանդէսը կը գրէ հետևեալը. «Ահաւասիկ արձակ քերթուածներու, հէքիաթներու, նորավէպներու հաւաքածոյ մը, լեցուն ինքնատպութեամբ և այն արևելեան համով՝ այնքան գունագեղ և յափշտակիչ, ուր բանաստեղծութիւնը կը խառնուի հեգնութեան ու յուզմունքին»։

«Պարի-Միդի» լրագիրը, իր «Օրուան գիրքը» բաժնին մէջ կարտատպէ այս հատորին «Երազի քաղաք» գլուխը ամբողջութեամբ, հետևեալ ծանօթութեամբ՝ զոր ստորագրած է Պօլ Սուշօն բանաստեղծը. «Ահաւասիկ արձակ քերթուածներ, հէքիաթներ և ֆանթէզիներ, որոնց բնագիրը մեզի միշտ անմատչելի պիտի մնայ, որովհետև գրուած է հայերէն։ Բայց անոնց հեղինակը, պ. Արշակ Չօպանեան, քաջավարժ է ֆրանսերէն լեզուին բոլոր նրբութիւններուն, և իր թարգմանութիւնը մեզի թոյլ կուտայ գնահատել հայկական ցաւագին հայրենիքին խորապէս կապուած սրտի մը ազնուական զգայնութիւնը»։

«Լը-Սիէքլը» լրագիրը կը գրէ հետևեալը. «Պ. Արշակ Չօպանեան կը հրատարակէ նոր հաւաքածոյ մը քերթուածներու և ֆանթէզիներու «Կեանք և Երազ» տիտղոսով, ուր վերստին կը գտնենք սուր զգայնութիւնը, արևելեան երևակայութիւնն ու ցաւոտ հայրենասիրութիւնը հայ բանաստեղծին, որուն արդէն պարտական ենք նաև հայոց ազգային բանաստեղծութեան մասին հատորներ՝ «Poèmes arméniens, enciens et modernes», «Chants populaires arméniens», «Les trouvères arméniens». «Կեանք և Երազին» մէջ՝ վտարանդի բանաստեղծը կերգէ իր ցեղին ցաւը, Վոսփորի գարունը և սիրոյ յաւերժական երգերը, զոր խօսեցեալները կրկնելու կըսեն աշխարհի բոլոր երկիրներուն մէջ։ Նամակ-յառաջաբանի մը մէջ Էմիլ Վէրհարըն կը նկատէ, որ Արշակ Չօպանեան կիրականացնէ ամենէն հին և ամենէն աստուածային գաղափարը, զոր մարդկութիւնը կազմած է բանաստեղծին մասին. ան կը դադրի ինքզինքը ըլլալէ ու կը դառնայ ժողովուրդի մը հոգին։ Արդարև այս քերթուածներէն շատերը տպաւորութիւնը կը ձգեն հաւաքական երգերու, ժողովրդական արտադրութիւններու, և առիկա անշուշտ գեղեցկագոյն ապացոյցն է, թէ բանաստեղծին հոգին նոյնացած է իր հայրենիքին ոգւոյն հետ»։

«Մերկիւր դը Ֆրանս» ամսագրին գրական քննադատը, Ժօրժ Դիւհամէլ, կը գրէ.

«Պր. Արշակ Չօպանեան, որ մեծապէս նպաստած է հայկական բանաստեղծութիւնը Ֆրանսայի մէջ ծանօթացնելու, կը հրատարակէ, «La Vie et le Rève» տիտղոսով, ֆրանսերէնի վերածուած, հաւաքածոյ մը այլ և այլ քերթուածներու և ֆանթէզիներու, զոր հեղինակը նախ և առաջ իր մայրենի լեզւով գրած և հրատարակած էր։ Ուրեմն, հակառակ պ. Չօպանեանի ֆրանսերէն ոճին անվիճելի բարեխղճութեան, թարգմանութեան մը մէջէն է որ պէտք է գուշակենք բնագրին երաժշտականութիւնն ու համը։

«Մեր այս հետախուզմանց մէջ մեզի մեծապէս կօգնէ Էմիլ Վէրհարըն, որ «La Vie et le Rève»-ին համար գրած է նամակ-յառաջաբան մը, լեցուն այն սրտագին շեշտով, որ վարպետին ամենէն սիրուն առաքինութիւններէն մին է. «Չկայ բան մը ձեր ցեղին վերաբերող,—կը գրէ ամբողջ Ֆլամանիայի բանաստեղծը,—զոր դուք խորացուցած չըլլաք, այնպէս որ մենք ձեր ձայնին մէջ կը լսենք ամբողջ ժողովուրդ մը, որ կը խօսի, կը սիրէ, կը տառապի, կոգեւորի՝ առանց երբեք մեռնելու։ Դուք այսպէս կիրականացնէք ամենէն հին և ամենէն աստուածային գաղափարը, զոր մարդկութիւնը կազմած է բանաստեղծին մասին։ Դուք կը դադրիք ձեր անձն ըլլալէ՝ աշխարհի մը մարդկային հոգին ըլլալու համար։ Անշուշտ, դուք չէք ստեղծեր զայն, բայց զայն կը վերաստեղծէք այն դարաւոր ձևերուն համեմատ, զոր ճակատագիրը տուաւ անոր»։ Ահա ճշգրիտ ու խորաթափանց գովեստ մը, որուն մենք յօժարակամ կուզենք մասնակցիլ»։

Արշակ Չօպանեանի՝ շատ մը անձնաւորութիւններէ ստացած նամակներուն ամենէն կարևորներուն թարգմանութեանցը անցնինք այժմ։

Մեծանուն բանաստեղծ և ակադեմական Հանրի դը Ռէնիէ կը գրէ. «Շնորհակալ եմ, որ բարեհաճեր էք ինձ ուղարկել ձեր գեղեցիկ գիրքը, զոր կարդացի ամենամեծ հետաքրքրութեամբ և որուն այնքան յուզիչ, այնքան նուրբ և այնքան ներդաշնակ բանաստեղծութիւնը խորապէս ճաշակեցի. ձեր գործը արդարև, ինչպէս կըսէ Վէրհարըն, համակ զգայնութիւն և երևակայութիւն է, և այդ զգայնութիւն ու երևակայութիւնը հազուագիւտ ու թանկագին տեսակէ են։ Կրկնելով իմ բոլոր շնորհակալութիւններս, կը խնդրեմ, որ ընդունիք, սիրելի պարոն, իմ սրտագին համակրութեանցս հաւաստիքը»։

Ծանօթ բանաստեղծ, ֆրանսացի բանաստեղծներու ընկերութեան դեր-նախագահ Էռնէստ Ռէյնօ կը գրէ. «Սիրելի բանաստեղծ, ներեցէք որ այսքան ուշացայ շնորհակալութիւն յայտնելու այն երեք հատորներուն*) մասին զոր ինծի ղրկած էիք և որոնց ընթերցումը ինծի զմայլելի վայրկեաններ անցնել տուաւ. կուզէի ձեզ երկարօրէն ըսել զգացած հրճուանքս, բայց ծանրաբեռ կեանքս դեռ թոյլ չտուաւ ատոր համար հարկ եղած ժամանակը գտնելու. պիտի ըսեմ ուրեմն ամեն ինչ, որ ունիմ ըսելու՝ ֆրանսացի բանաստեղծներու ընկերութեան պաշտօնաթերթին յառաջիկայ թուին մէջ»։

Յայտնի հայագէտ Մէյէ կը գրէ. «Շնորհակալ եմ ձեր հատորին համար, ուր անգամ մը ևս կը գտնեմ ձեր տաղանդը, որ այնքան ինքնատիպ է՝ երկու լեզուի մէջ»։

Բանաստեղծուհի տիկ. Ալֆօնս Դօդէ կը գրէ. «Բոլոր լաւագոյն շնորհակալութիւններս, պարոն, ձեր «Կեանք և Երազ» գրքին համար։ Անոր մէջ կը գտնեմ մեծ բանաստեղծութիւն մը։ Դուք հոն կերգէք աստղերն ու ծաղիկները։ Դուք հոն մեր հիացմանը մէջ կը միացնէք ամեն ինչ, որ կարժէ սիրուիլ ու փառաբանուիլ, և ձեր ազգային դրօշմը այս բոլորին վրայ կաւելցնէ ինքնատիպ ու ժուժկալ գոյն մը։ Ամենայն անկեղծութեամբ ձեզ կը մաղթեմ յաջողութիւն»։

Ծանօթ բանաստեղծ և քննադատ Գաբրիէլ Մուրէ կը գրէ. «Սիրելի բարեկամս, նոր կարդացի ձեր գիրքը։ Թոյլ տուէք ինծի ըսել, ինչքան սքանչացած, յափշտակուած եմ ձեր պատկերներու ճոխութենէն, ձեր զգացման խորութենէն, ձեր երազին քմայքոտ շնորհքէն։ Այնտեղ կան շատ մը քերթուածներ, որոնց մէջէն կանցնի ճշմարտապէս հոյակապ ներշնչում մը, մանաւանդապէս այդ «Ներբողը ի պատիւ հայ լեզուին», որ լեցուն է այնքան հաղորդական և այնքան բարձր յուզմունքով մը։ Եւ ինծի կը թուի, թէ դուք երբեք չէք գրած աւելի ինքնավստահութեամբ և աւելի զօրութեամբ, երանգներու աւելի նուրբ զգացումով և աւելի պերճախօսութեամբ։ Ընդունեցէք, սիրելի բարեկամս, ամենէն սրտագին շնորհաւորութիւններս»։

Ֆրեդէրիք Միսթրալ կը գրէ. «Շնորհակալութիւններս և շնորհաւորութիւններս ձեր «Կեանք ու Երազին» համար։ Ճամբորդութիւն մը ի Հայաստան՝ բանաստեղծին Ջիակորճին (Hyppogryphe) վրայ»։

---

*) Տես «Մշակ» № 86.

*) Տես «Մշակ» № 86.

Պ. Չօպանեան ղրկած էր նաև «Chants populaires» և «Trouvères Armenien».

տացել շուշեցի Ց. Մելիք-Շահնազարեանց, որը և նոտարական պայմանագրութեամբ վճարել է Տօնաշէնի հասարակութեանը՝ որպէս իրանց հողերում պեղումներ անելու վարձ՝ 200 րուբլի։

Ղարաբաղցի հայը աշխատանք որոնելու համար շնչակտուր վազ է տալիս Ռուսաստանի և Թուրքեստանի քաղաքները՝ միշտ իր պապենական արշինով կամ զանազան չարչիութեամբ փող աշխատելու, մինչդեռ իրանց մայր հայրենիքի կրծքում այսպիսի անբաւ և անսպառ գանձեր կան թաղնված, որոնք սպասում են, թէ երբ պէտք է իրանց հարազատ զաւակների բահ ու բրիչով լոյս աշխարհ դուրս գան։

Մի թողնէք, որ ձեր դռանը գտնվող սոսկիներն օտարները տանեն, որոնց անշուշտ վրա են թափվելու՝ հէնց որ հանքերի հոտը առնեն։

Մենտոր-Միրաժ

ՔԱՂ. ԻՐԱՒԱՍՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍՂՆԱԽՈՒՄ

Սղնախ, 20 ապրիլի

Դեռ ևս մի տարի առաջ հաղորդել էինք, որ քաղ. իրաւասուների ընտրութիւնների առիթով Սղնախում մղվում է ուժեղ ընտրողական ագիտացիա՝ հիմնված զուտ ազգայնական հողի վրա։ Վրացիները ցանկանում էին ընտրել վրացի ձայնաւորներ և քաղաքի տնօրէնութիւնը յանձնել վրացիներին, իսկ հայերը դիմադրում էին և կամենում էին քաղաքը պահել հայերի ձեռքում։

Համերաշխութիւն, եղբայրութիւն, բարի հարևանութիւն—սրանք լոկ խօսքեր են, որոնք չեն պահպանվում ոչ մի կողմից։ Քաղաքի համար պէտք է ընտրել ինտելիգենտ, գործունեայ մարդ՝ լինի նա հայ կամ վրացի, որովհետև այդտեղ ազգութիւնը ոչ մի դեր չի կատարում։ Սակայն այսպէս չեն հասկանում բնակիչները և նրանք ենթակայ էին մի խումբ մարդկանց ազդեցութեան։

Նախկին տարիները Սղնախ, Ճօտօրի և Մաղարօ գիւղերը միասին էին կատարում իրաւասուների ընտրութիւնը։ Ասում էին, որ մի խումբ վրացիներ փոխարինաբար փող էին տուել գիւղացիներին և մաքրել տուել քաղաքային ապառիկներ, որպէսզի ձայնից չը զրկվեն։ Եթէ այս գիւղացիները միասին ընտրէին իրաւասուներին, այս ժամանակ ոչ մի հայ ձայնաւոր չէր անց կենայ։ Քաղաքը բաժանվեց երկու մասի. բուն Սղնախ և Ճօտօրի ու Մաղարօ գիւղեր։

Ապրիլի 14-ին կայացան առաջին քաղաքամասի իրաւասուների ընտրութիւնները՝ 9 իրաւասու և 2 կանդիդատ ընտրելու համար։ Ընտրվեցին՝ Նիկ. Տէր-Մատթէոսեան, Արտեմ Շահվերդեան, Նիկ. Ամիրխանեան, Արշակ Ղուլիջանեան, Գէորգ Նոնեան, Քր. Փարեմուզեան, Յակ. Սահակեան, Ստ. Վարդանեան, Գէորգ Եսայեան, Ալ. Աւագեան, Ստ. Հասրաթեան, Սարգիս Ցովակիմեան։

Շուտով լինելու է նաև երկրորդ քաղաքամասի իրաւասուների ընտրութիւնը։ Այդտեղից պէտք է ընտրել 6 իրաւասու և 1 կանդիդատ։ Բոլոր թեկնածուները վրացիներ են, որոնք անշուշտ և կընտրվեն։

Այս ընտրութիւնների առիթով տեղական վրաց լրագիրը ամբողջ թոյն է թափում հայ ազգաբնակութեան վրա՝ գրգռելով վրացիներին հայերի դէմ։ Ինչով է մեղաւոր հայ ժողովուրդը, հասկանալի չէ։ Եթէ մի բուրժուական հայ խմբակ, որ հայերէն բոլորովին չը գիտէ, ոչ խօսում է և ոչ կարդում հայերէն, աշխատեց իր շահերի համար ընտրել հայ իրաւասուներ, դա չի նշանակում, որ ամբողջ Հայաստանը պատասխանատու է դրա համար։ Բժիշկ Ջանդիէրին, փաստաբան Դատքվիաշվիլիին սևացնելը մենք համարում ենք մեծ սխալ։ Սակայն միւս կողմից վրաց ինտելիգենցիան նոյնպէս մեղաւոր է, որ իր կողմից հարցին տուեց նեղ նացիոնալիստական արտայայտութիւն։

N. N.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Ապրիլի 23-ին, Նորին Կայսերական Մեծութիւն Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնայի անուանակոչութեան օրը, Ալէքսանդր-Նևսկի զինուորական տաճարում, հանդիսաւոր պատարագից յետոյ, կատարվեց մաղթանք։ Մաղթանքը կատարեց Երևանի եպիսկոպոս սրբազան Պիմէնը, մասնակցութեամբ եպիսկոպոս Անտոնի և քաղաքիս ռուս հոգևորականութեան։ Հանդիսակատարութեանը ներկայ էին՝ Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ, փոխարքայի ամուսին կոմսուհի Վօրօնցօվա-Դաշկօվա, փոխարքայի օգնականներ Ա. Ձ. Միշլաևսկի և հօֆմէյստէր Ն. Լ. Պետերսօն, նահանգապետը, գեներալիտէտը, զանազան վարչութիւնների և բաժանմունքների կառավարիչներ, ազնուականութեան պարագլուխներ, քաղաքագլխի պաշտօնակատարը և այլ բազմաթիւ անձինք։ Մաղթանքներ կատարվեցին նոյնպէս Սիօնի տաճարում, հայոց Վանքի եկեղեցում, կաթոլիկների, բողոքականների եկեղեցիներում, աղանդաւորների աղօթատներում, մահմեդականների մզկիթում և հրէից սինագօգում։ Քաղաքը առաւօտից զարդարված էր դրօշակներով, իսկ երեկոյեան լուսավառութիւն կար։

◆ Երևանի նահանգում վերջին ժամանակներս տեղի ունեցած աղէտի դէպքի առիթով, Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը մանրամասն տեղեկութիւններ հաւաքելու համար դիմել է Երևանի փոխ Թեմակալ Խորէն եպիսկոպոսին, Հին-Նախիջևանի յաջորդ Սիոն վարդապետին և Ընկերութեան Երևանի, Վաղարշապատի և Հին-Նախիջևանի ճիւղերին հետևեալ հեռագրով. «Խորհուրդս խնդրում է հեռագրով մանրամասն և ճիշդ տեղեկութիւններ հաղորդել Երևանի նահանգում և գաւառներում վերջին սառնամանիքների պատճառով առաջացած վնասների մասին»։

◆ Երեքշաբթի, ամսիս 22-ին, Լ. Ի. Ղուլեանի նախագահութեամբ կայացաւ պոլիտեխնիկումի գլխաւոր կոմիտէի տեխնիկական յանձնաժողովի նիստը, որտեղ քննութեան առնվեց ինստիտուտի շէնքի յատակագիծը և հաստատվեց՝ գլխաւոր կոմիտէին յանձնելու համար։ Այդ նիստում քննվեց և պոլիտեխնիկումի հիմնարկութեան (մայիսի 4) կարգի ծրագիրը։

◆ Թուրքաց հոգևոր վարչութիւնը որոշել է դիմել կառավարութեան, խնդրելով Թիֆլիսում թուրքական հոգևոր սեմինարիա բանալ։

◆ Վաղը, ժամը 8-ին երեկոյեան, հասարակական ակումբի դահլիճում կը կայանայ այս սեզոնի վերջին երեկոյթը։ Նշանակված է Ս. Ն. Սօլօվիէվա-Սարախօվայի աշ.-աշակերտուհիների համերգ-քննութիւնը։ Նոյն օրը ժամը 6-ին երեկոյեան, նոյն ակումբում Ե. Ա. Լիանօզօվա մանուկների համար կը կարդայ Դ. Ի. Մամին-Սիբիրեակի մանկական գրուածքները։

◆ Առաջիկայ յունիսի 14-ին Նիժեգօրօդի ուսուցչական սեմինարիայի ուսանողները իրանց դասատուների հետ գալու են Կովկաս։ Ռազմավիրական ճանապարհն անցնելու են ոտքով։

◆ Նորաշէնի ս. Մարիամեան եկ.-ծխ. դպրոցի չքաւոր աշակերտուհիների ձրի ճաշարանի օգտին չորեքշաբթի, ապրիլի 23-ին նշանակված գրօսանքը յետաձգված է վաղը, շաբաթ, ապրիլի 26-ին, նոյն տեղում (Հաւլաբարի հասարակական ակումբի ամառային շէնք)։

◆ Հասարակական ակումբի աւագների խորհուրդը ապրիլի 30-ին Հաւլաբարում հանդիսաւոր ներկայացում է կազմակերպում ի պատիւ դերասան Գէորգ Տէր-Դաւթեանի բեմական 40-ամեայ գործունէութեան։

◆ Առևտրի և արդիւնաբերութեան մինիստրութեան դպրոցների շրջանային վերատեսուչ Պ. Մ. Վերխօվսկի երէկ վերադարձաւ Ալէքսանդրօպօլից, ուր գնացել էր՝ այնտեղի առևտրական դպրոցը դիտելու։

◆ Գործակատարների ակումբին թոյլատրված է մայիսի 11-ին մի գրօսանք կազմել ակումբի շէնքում, նրա միջոցներն աւելացնելու նպատակով։

ԿՈՎԿԱՍ

◆ Ներքին գործերի մինիստրը խնդրում է փոխարքային կարգադրել Բագուի ինքնավարութեան՝ տրամվայի կոնցեսիայի հարցի լուծումը շտապեցնելու։ Մինիստրը իր խնդիրը պատճառաբանում է նրանով, որ, մինիստրութեան մէջ, մի շարք դրամատէրերից, որոնք շահագրգռված են Բագուի տրամվայի գործով, ստացվում են շատ գրութիւններ այն մասին, որ Բագուի քաղ. ինքնավարութեան դանդաղկոտութիւնը, տրամվայի կոնցեսիայի հարցը վճռելու գործում, իրանց ահագին վնասներ է հասցնում։

◆ Ապրիլի 17-ին Շուշում առատ ձիւն է եկել, բայց, բարեբաղդաբար, շրջականերում չէ տեղացել, այլ միայն քաղաքի սահմաններում։

◆ Սարսափելի սառնամանիքները, որ եղան ապրիլի 18-ին, հսկայական վնասներ հասցրին Երևանի նահանգի ազգաբնակութեան։ Ամեն կողմից անմխիթար տեղեկութիւններ են լսվում։ Բոլոր այգիները կատարելապէս ոչնչացել են։ Միայն Երևանը իր այգիներով աւելի քան երկու միլիոնի վնաս ունեցաւ, իսկ գաւառներում, մանաւանդ Աշտարակում, որտեղ ազգաբնակութիւնը բացառապէս խաղողի գործով է զբաղվում, վնասը աւելի մեծ չափերի է հասնում։ Կարելի է նախատեսել, որ սով կը լինի, որովհետև խաղողի այգիները ապրուստի միակ միջոցն են հանդիսանում մի քանի շրջանների համար։ Այս աղէտի հետևանքով շուկայի գները, ի հարկէ, կը բարձրանան։ Հէնց աղէտի միւս օրը, գինեվաճառները ի նկատի ունենալով այդ հանգամանքը և Ռուսաստանի կենտրոնները կարգադրութիւններ ուղարկեցին, որ գինու գները բարձրացել են. դրա հետ միասին դադարեցրին պատուիրած գինու առաքումը։ Սառնամանիքներից յետոյ եղանակները վերականգնեցին և այժմ հրաշալի օրեր են լինում։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ «Бирж. Вѣд.»-ի ասելով, ներքին գործերի մինիստրի հարցին բոլոր նահանգապետները պատասխանել են թէ՝ պահնորդական բաժանմունքները վերացվելու արժանի են, ի նկատի ունենալով, որ այժմ պահնորդական ֆունկցիաները յանձնվում են ժանդարմական վարչութիւններին։ Ներկայումս ներքին գործերի մինիստրութեան մէջ մշակվում է համապատասխան օրինագիծ։

◆ «Пет. Кур.»-ի ասելով, Պետերբուրգում թոյլատրված մահմեդական համագումարի նպատակն է՝ քննել բոլոր այն հարցերը, որոնք մտնում են ներքին գործերի մինիստրութեանը կից հաստատված մահմեդական գործերի մասնաժողովի օրակարգում։ Համագումարի որոշումները ներկայացվելու են յիշեալ մասնաժողովին իբրև յատուկ նիւթ։ Ինչպէս հաղորդում են, ներքին գործերի մինիստրը թոյլատրել է համագումարն այն պայմանով, եթէ նրան կը մասնակցեն անհամեմատ աչքի ընկնող մահմեդական գործիչներ։

◆ Կիէվում Գօֆմանի ընտանիքը ստացաւ 200 միլիօն դոլլարի ժառանգութիւն։ Ժառանգներ միայն Ամերիկայում երևացել են 300 հոգի։

◆ Եալտայում ևս կատաղի մրրիկը ահագին վնասներ հասցրեց։

◆ Մայրաքաղաքի լրագիրների ասելով, Ջխէիձէին դատապարտելուց յետոյ, կառավարութիւնը պատասխանատւութեան է ենթարկելու նաև Կօնօվալօվին, որ Պ. Դումայում նախագահելիս իր ժամանակին չը կանգնեցրեց Ջխէիձէին։

◆ Մայրաքաղաքի լրագիրները իբրև լուր հաղորդում են, որ եթէ Դուման բիւջէն մերժէ, Պետական Դուման կը վերացվի բոլորովին և կը փոխարինվի վերակազմված Պետ. Խորհրդով, իբրև ներկայացուցչութիւն քաղաքներից, վօլօստներից, զեմստվօներից, գիտական հաստատութիւններից, ազնուականութիւնից, արդիւնաբերութիւնից և կառավարութիւնից։ Կարևոր դէպքերում կը գումարվի կարճ ժամանակով զեմստվային ժողովներ։

◆ Մօսկվայում հիմնվում է ժողովուրդների ակումբ։

◆ Պետերբուրգում երևան հանվեց ծերունիների ակումբ, որի անդամները կարող են համարվել պրօֆ. Մերէժկօվսկիի արժանաւոր հետևողներ։

◆ Պետական Դումայում ներքին գործերի մինիստրութեան նախահաշուի քննութեան ժամանակ խօսելու է մինիստր Մակլակօվը ներքին քաղաքականութեան մասին։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Ապրիլի 22-ին, Պենզայի նահանգի գիւղացի Մինօդօր Կրիչագին յայտնեց ոստիկանութեան, որ նոյն օրը անյայտ չարագործները յարմարեցրած բանալիով իր տան դուռը բանալով մտել են տուն և 120 րուբլի տարել։ Ոչ ոքի վրա կասկած չէ յայտնված։

◆ Նոյն օրը Քութայիսի նահանգի Օպշկվիտի գիւղացի մի կին՝ Նինա Դվեձուաշվիլի ինքնասպան լինելու նպատակով խմեց նաշատիրի սպիրտ։ Շուտափոյթ օգնութեան կառքը նրան օգնութիւն ցոյց տուեց։ Այն հարցին, թէ ինչու էր ինքնասպանութեան դիմում, Դվեձուաշվիլին պատասխանեց, որ «զզվել է ապրելուց»։

ՄԱՄՈՒԼ

Հայկական ռէֆորմների ծրագիրը ընդունվելուց յետոյ, հայ իմացական դասի և ղեկավար շրջանների հոգածութեան առարկան պէտք է լինի միջոցներ ձեռք առնել Հայաստանի ժողովրդի քաղաքական-մտաւոր և կուլտուրական-տնտեսական վերածնութեան մասին։

Հայկական Բարեգործ. Ընդհանուր Միութիւնը, որի նախագահն է Պօղոս Նուպար փաշան, իր հոգացողութեան առարկայ է դարձրել արդէն այդ հարցը, ինչպէս կարելի է տեսնել «Բիւզանդիոն» թերթի մէջ տպված հետևեալ յօդուածից.

Երէկ (9 մարտ) Աղեքսանդրիայէն հասած նամակէ մը գոհութեամբ կը տեղեկանանք, որ վսեմ. Պօղոս Նուպար Եգիպտոս վերադարձէն անմիջապէս յետոյ Բարեգործ. Միութեան վարչական խորհուրդին անդամներուն հետ անպաշտօն խորհրդակցութիւններ ունեցեր է, և այս օրերս ալ կեդր. վարչ. ժողովը իր նախագահութեամբ պաշտօնապէս պիտի գումարուի՝ հայաբնակ գաւառներուն մէջ բարենորոգմանց գործադրութեան առթիւ տեղւոյն հայ ժողովրդեան տնտեսական անկեալ վիճակին բարելաւման օժանդակութիւններ ընելու, և մասնաւորապէս օրէնքի սահմանին մէջ ժողովրդեան հողային խնդրոյն մէջ իր իրաւունքը պաշտպանելու միջոցներուն վրայ խորհրդակցելու համար։ Այս նպատակաւ ըլլալիք նիւթական զոհողութիւնը Բարեգ. Միութիւնը կարևոր չափով սահմանելու պատրաստակամութիւն ունի և իր պահեստի դրամագլուխէն կարևոր գումար մը տրամադրելու կը յօժարի, բայց մանրամասնութեանց վրայ խորհրդակցելու պէտք տեսնուած է, որպէսզի ըլլալիք օժանդակութիւնները գործնական ձև ունենան և տեւական ու միայուն արդիւնք յառաջ բերեն։ Առաջարկութիւններ կան Ֆրանսայի և Ամերիկայի մէջ երկրագործութիւն ուսած անձեր ղրկել գաւառները, որպէսզի գիտական նոր դրութիւններու կիրառութեան հող տանին։ Կառաջարկուի նոյնպէս գիւղական ժողովուրդին հողային սեփականութեան ապահովման համար դիւրութիւններ ընծայել։ Վերջապէս, առանց կարևոր օժանդակութեան մը, հայաբնակ նահանգներուն, մասնաւորապէս Բաղէշի, Տիգրանակերտի և Վանի գիւղացի հայ ժողովուրդը չպիտի կրնայ օգտուիլ երկրին մէջ գործադրուելիք բարենորոգումներէն։

Բարեգործական Միութեան այս նպատակաւ ցոյց տուած հոգածութիւնը օսմանեան երկրին յառաջդիմութեան տեսակէտով մեծապէս գնահատելի կը համարուի։ Միութիւնը թէև ոևէ պաշտօնական մարմինէ կախում չունի, բայց իր կարգադրութեանց առթիւ պատրիարքին ալ տեսութիւնները պիտի լսէ։ Տէր-Զաւէն սրբազան, որ այս միջոցին կը գտնուի պատրիարքական աթոռին վրայ, անձնապէս համակրութիւն և մեծ վստահութիւն կը վայելէ Բարեգործական Միութեան նախագահին և վարչական ժողովի անդամաց մօտ, և իր թելադրութիւններով գաւառի հայութեան շատ կարևոր ծառայութիւններ պիտի կրնայ մատուցանել։

Թէ ինչ պէտք է անենք ռուսահայերս, այդ մասին առանձին կը խօսենք։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 23 ապրիլի

Հանգուցեալ վիպասան Մուրացանի ձեռագրադարանը նուիրվում է իր ծննդավայր Ղարաբաղի թեմական դպրոցին, ուր և ուսանել է հռչակաւոր մատենագիրը։ Աւելի քան 3000 ր. արժէք ունեցող այս գրադարանը վիպասանի ժառանգները սիրայօժար նուիրաբերելով Ղարաբաղի թեմական դպրոցին, բարեհաճեցին ընդունել մեր հետևեալ առաջարկը։ Համաձայնել վաճառել գրադարանի $^{1}/_{3}$-ականը, իսկ թողնել նուէր ժառանգներից $^{2}/_{3}$-ականը։ Այդ $^{1}/_{3}$-ականի—1000 ր. դիմաց զիջանել Ղարաբաղի թեմական դպրոցին Մուրացանի ձէթանկար պատկերը, Գ. Բաշինջաղեանի «Սևան» ձէթա-

Պ. Լիւդովիկ դը Կոստանսօն. «Շնորհակալ եմ ձեր «Կեանք և Երազ» գմայլելի հատորին համար, ուր անգամ մը ևս ինքզինքը կապացուցանէ ձեր փափուկ տաղանդը»։

Րընէ Պինօն, ծանօթ քաղաքական հրապարակագիրը, կը գրէ. «Շատ շնորհակալ եմ, սիրելի պարոն, որ բարեհաճեր էք ինձ ուղարկել ձեր նոր գիրքը, որ ինչպէս իր անդրանիկները՝ ձեզի պատիւ կը բերէ։ Այս թարգմանութեան ընթերցումը ինծի ցաւիլ կուտայ, որ հայերէն չեմ գիտեր։ Բայց ձեր էջերը լեցուն են թափանցող ու փափուկ բանաստեղծութեամբ մը, զոր կարելի է գնահատել նոյն իսկ թարգմանութեան մէջ»։

Լուի Պայէն բանաստեղծը կը գրէ. «Սիրելի եղբայրակից, մեծ հաճոյքով կարդացի ձեր էջերը, բանաստեղծութիւնով այնքան տոգորուած, և ուր մտածումը այնքան անձնադրոշմ մըն է և յաճախ այնքան յուզիչ։ Ինչպէս ձեզի կըսէ Էմիլ Վէրհարըն իր յառաջաբանին մէջ, դուք սիրտ մըն էք, որ կը բաբախէ իր հայրենիքին սիրտին մէջ իսկ, և ամբողջ ձեր ցեղն է, որուն մենք կունկնդրենք ձեր գործերուն մէջ. դուք զայն մեզի կը ճանչցնէք. դուք զայն մեզի կը սիրցնէք ձեր այնքան անձնական արուեստովը, և մենք ատոր համար ձեզի խորապէս երախտագէտ ենք»։

Մեծանուն իմաստասէր և սիօնականութեան գլխաւոր ղեկավարներէն դօկտօր Մաքս Նօրդաու կը գրէ. «Սիրելիդ իմ բանաստեղծ, յարատև յուզմունքով մը կարդացի ձեր «Կեանք և Երազը»։ Ո՜րքան կը ցաւիմ հայերէն չգիտնալուս, մանաւանդ վերյիշելով ձեր սքանչելի գեղօնը ի պատիւ ձեր մայրենի լեզուին։ Բայց նոյն իսկ բնագրին հրապոյրներէն մերկացած, ձեր քերթուածները մեծ գեղեցկութիւններ կը պահեն դարձեալ, անոնք համակ ճաճանչաշող են խորին զգացումով և ազնուական մտածումով։

«Ձեզի պէս բանաստեղծներ լաւագոյն տիտղոսներն են կեղեքուած ազգի մը. ստեղծելով, երգելով, դուք հզօրապէս կաշխատակցիք հայ ժողովուրդին ապագան պատրաստելու։ Բոլոր շնորհաւորութիւնները ձեր անձնուէր սքանչացողին՝ Մաքս Նօրդաու»

Բանաստեղծուհի դքսուհի դը Րօհան կը գրէ հետևեալը. «Սիրելի բանաստեղծ. ձեզի անհունօրէն երախտագէտ եմ ձեր հատորը ինծի ղրկած ըլլալնուդ համար։ «Կեանք ու Երազի» էջերը զիս ջերմօրէն շահագրգռեցին, կրկնապէս խանդավառեցին, քանի որ եղած եմ Հայաստան, Երևան, Էջմիածին և Թիֆլիս. ձեր քերթողաշունչ ու ցաւագին երգերը շատ ինքնայատուկ և շատ սրտայոյզ հրապոյր մը ունին։

«Ընդունեցէք, սիրելի պաշտօնակից, իմ ջերմ համակրութեանս հաւաստիքը և շնորհակալութիւններս»։

Գերմանացի բանաստեղծ և գրական քննադատ Օ. Հալբէրման կը գրէ հետևեալ նամակը. «Սիրելի պարոն, հազար անգամ շնորհակալ եմ այնքան գեղեցիկ գրքին համար, զոր բարեհաճեր էք ինձ ուղարկել։ Կարդացի զայն—կամ աւելի ճիշդ՝ խմեցի—մէկ շունչով, ինչպէս որ մարդ աղբիւրին վրայ ծռած՝ վճիտ ջուր մը կը խմէ, կամ ինչպէս հեշտագնօրէն կը ծծէ մարդ ծովուն առողջ շունչը։ Այսպիսի բաղդատութիւններ ինքնին կը ներկայանան. կարդալով ձեր էջերը, մարդ կը կարծէ լսել նոյնինքն բնութեան ձայնը իր ամբողջ ոյժին և իր ամբողջ անմեղութեան մէջ։ Ահաւասիկ ինչ որ ինծի կը թուի ձեր գործին ամենէն ուշագրաւ և ամենէն պաշտելի գիծը, անմեղութիւնը։ Բայց ատիկա պարզամիտ անմեղութիւն մը չէ, ոչ ալ կամաւոր և բռնազբօսիկ միամտութիւն մը, ինչ որ շատ յաճախ, աւա՜ղ, հանդուրժել սովրած ենք մերօրեայ քնարական բանաստեղծութեանց մէջ. ո՛չ, առնական անմեղութիւն մըն է, որ հիմնովին ճանչնալով հանդերձ կեանքի ախտաւոր տգեղութիւնը՝ կը շարունակէ հաւատալ անոր ջերմեռանդ հաւատքով մը տղու, կամ, եթէ կը նախընտրէք, ժողովուրդի, ինչպէս այնքան լաւ մատնանիշ ըրած է սքանչելի Վէրհարըն...

«Շնորհակալ եմ՝ անգամ մը ևս՝ ձեր գեղեցիկ գրքին համար, սիրելի բանաստեղծ ծովուն, լուսնին, աստղերուն և, ինչ որ էական է, իղձալին»։

Ծանօթ ամերիկացի հայասէր բանաստեղծուհի օրիորդ Ալիս Սթօն Բլաքուէլ կը գրէ. «Պարոն, շատ շնորհակալ եմ, որ բարեհաճեր էք ինձ ուղարկել ձեր շատ շահեկան գիրքը։ Այս առիթով թոյլ տուէք ինձ ձեզ ըսել, թէ դուք մեծ ծառայութիւն մը մատուցիք հայ գրականութեան, ֆրանսերէնի թարգմանելով այնքան հայկական երգեր և քերթուածներ։ Ձենէ առաջ անոնք կարծես թէ հանքի մը մէջ թաղուած էին։ Դուք զանոնք ամենուն ճանչցուցիք։ Խնդրեմ որ ընդունիք, պարոն, իմ կրկին շնորհակալութիւններս և սրտագին բարևներս»։

Յայտնի գրող Հանրի Բօէր հետևեալ նամակը կուղղէ.

«Ձեր հատորը ձեռքս հասաւ Արմորիքի այս փոքրիկ աւանին մէջ, ուր սովորաբար ամառը կանցընեմ, և շնորհակալ եմ, որ մտածեր էք ինծի ալ ղրկել այս փունջը շնորհալի ու մաքուր հոգիի մը ծաղիկներուն։

«Չեմ մոռցած ձեր այցելութիւնները և մեր մտերիմ յարաբերութիւնները 15 տարի առաջուան։ Հպարտ հաճոյքով մը կը յիշեմ այն գեղեցիկ էջը, զոր իմ վրաս գրեցիք. կը ցաւիմ որ, լրագրութենէ հեռացած ըլլալով, առիթը չունիմ ձեր բանաստեղծական խառնուածքին, Վէրհարընէն յետոյ, արժանաւոր մեծարանքը յայտնելու. կը շնորհաւորեմ ձեզ և ձեռքերնիդ կը սեղմեմ, սիրելիդ իմ Արշակ Չօպանեան*)։

Անգլիացի նշանաւոր գրագէտ Փր. Հարրիսը կը գրէ.

«Պարոն, պատիւ ունիմ շնորհակալ ըլլալու ձեզ այն երկու սիրուն հատորներուն համար, զոր ինծի ուղարկեր էք։ Ջերմօրէն կը շահագրգռուիմ հայ ազգի պատմութեամբ, ձգտումներով և ապագայով, ու վստահ եմ, որ ճշմարիտ հաճոյք մը պիտի զգամ ձեր գործերը ուսումնասիրելով։

«Եղբայրական ողջոյններս»։

Նոր գրականութեան ուշագրաւ դէմքերէն մին՝ Ալէքսանդր Մէրսըրօ կը գրէ հետևեալը.

«Սիրելի պարոն և մեծարգոյ եղբայրակից. հազար ներողութիւն կը խնդրեմ շնորհակալութիւններս յայտնելու այսքան ուշացած ըլլալուս։ Ինծի շատ հաճելի եղաւ սակայն, որ խորհած ըլլաք ինձ ևս ուղարկել ձեր «Կեանք ու Երազը»։ Շատ մը ճամբորդութիւններ, շատ մը աշխատանք թոյլ չտուին ինձ աւելի կանուխ կարդալ այդ բանաստեղծութիւնները, որ զիս հմայեցին իրենց հագուագիւտ և խորաթափանց զգայնութեամբ, իրենց գրաւիչ և բազմազան գունագեղութեամբ։ Ինչքա՜ն յուզմունք, մելամաղձութիւն, եղերականութիւն ու նաև ի՜նչքան սէր և հեշտ տեսիլներ աչքերուս առջևէն անցուցիք դուք այդտեղ։ Ինչքա՜ն հզօր ոգեկոչումներ։ Դուք մեծ բանաստեղծներուն ցեղէն էք, և ձեզ համար անհնար է զայն ուրանալ։

«Ձեր յարգալից ու անձնուէր եղբայրակիցը՝ Ալէքսանդր Մէրսըրօ»։

Ծանօթ բանաստեղծ Ֆէրնան Գրէկ կը գրէ.

«Սիրելիդ իմ բանաստեղծ.

«Կարդացի, սքանչացայ, յուզուեցայ և հմայուեցայ։

«Հաւատացէք, խնդրեմ, անկեղծ և համակրական սքանչացմանս»։

Անգլիացի մեծանուն գրագէտ և հրեայ ցեղին արդի մտաւորական ամենէն հզօր ներկայացուցիչներէն մին՝ Իսրայէլ Զանգուիլ կը գրէ*). «Սիրելի վարպետ, չեմ գիտեր ինչ վերագրեմ պատիւը, զոր ինծի ըրած էք՝ ղրկելով ինձ ձեր երկու այնքան թանկագին գիրքերը։ Լաւ էք ըրեր ձեր երազներուն ցուցադրումին միացնել ձեր ժողովուրդին պատմութիւնը**)։ Ատիկա ինծի թոյլ կուտայ ըմբռնել թէ ինչքան եղբայր ենք դուք և ես, իւրաքանչիւրս զաւակ կեղեքուած ու կոտորուած ժողովուրդի մը, ատով հզօր, և որոնցմէ ամեն մէկը իրեն համար վերածնութիւն մը կերազէ ու ոչ նուազ կերազէ նաև ամբողջ մարդկութեան համար (յուսանք որ այս վերջնոյն ապագան ձեր երգիծական տեսիլքին մէջ երևցածին պէս չըլլայ)։ Կրնաք երևակայել թէ ինչպէս եղբայրական հոգիով մը կը ճաշակեմ ուրեմն այդ բանաստեղծութիւնները։ Ճիշդ ժամանակին կուգայ ձեր գեղեցիկ «Կեանքի տօնը», որովհետև այն պահուն ուր ձեզի այս տողերը կը գրեմ, հրէական 5673 տարին կը մեռնի և այնքան առողջ, այնքան քաջասիրտ, նոյնիսկ այնքան հսկայ լաւատեսութեանը մէջ։ Մերինները հիմա խնձոր ու մեղր կուտեն. «Ցնծագին Թաղում մըն է», այնպէս չէ՞։ Թող այս նոր տարին բաղդաւորութիւն բերէ ձեզի և ձեր ժողովուրդին։

«Ընդունեցէք, սիրելի պարոն Չօպանեան, իմ լաւագոյն շնորհակալութիւններս»։

---

*) Բօէյրի մասին գրուած յօդուածը, որուն կակնարկէ, Պ. Պօլսոյ «Հայրենիքին» մէջ հրատարակուած է 1898 թւին. իսկ 1896—1898 թւին Չօպանեան յաճախ կը տեսակցէր Բօէյրի հետ և իր խնդրանքով յաճախ Բօէյր հայոց դատը պաշտպանող ջերմ և ուժգին յօդուածներ հրատարակած է «Echo de Paris»-ին և «Journal»-ին մէջ։

**) Տեսնել Իսրայէլ Զանգուիլի մասին «Awrè Spire»-ի նոր լոյս տեսած գիրքը։

*) Չօպանեան ղրկած էր իր «La Vie etla Rève» գրքին հետ «Le Peuple Arménien» գրքոյկը։

նկարը (սեփականութիւն Մուրացանի), գրադարանի պահարանները, մի քանի իրեր գրասեղանի: Բացի այդ, պատուէր տալ Մուրացանի կիսարձանը և մի բարելիեֆ, որոնցով պճնվի այն դահլիճը, ուր զետեղվելու է Մուրացանի գրադարանը: Բոլոր ծախսերը թէ գրքերի, պատկերների, պահարանների տեղափոխութեան (Թիֆլիսից-Շուշի) և թէ կիսարձանի ու բարելիեֆների այդ 1000 ր. մէջ:

Մուրացանի ժառանգների այս ուշադրաւ որոշումը հրապարակով յայտնելով, հրաւիրում եմ Ղարաբաղի Թեմական դպրոցի նախկին և արդի սաներին փութով լրացնելու այդ 1000 ր. (իւրաքանչիւրը համեմատ իր գրպանի), որպէս զի կարելին չափ փութով հասցնվի Շուշի այդ թանգագին գանձը:

Նուիրաբերողների անունները կը տպագրվին առանձին բրօշիւրով Մուրացանի մատենադարանի ցուցակի հետ:

Դրամները կարելի է ուղարկել Շուշի, Թեմի առաջնորդ հ. Զաւէն վարդապետին կամ Թիֆլիս, «Տարազ» խմբագրութեան:

Լիազօր Մուրացանի ժառանգների՝

Տ. Նազարեան

Խաչի գիւղ (Լոռու շրջ.), 10 ապրիլ

Մարտի 30-ին, իմ բացակայութեան ժամանակ, Բորչալուի գաւառապետի օգնականը և Լոռու պրիստաւ Ստեփանեանը գալիս են Խաչի գիւղ, որոնք գալով իմ տունը և մըտնելով սենեակներս խուզարկում են ամեն տեղ, և ստիպում են կնոջս բաց անել սեղանի կողպած արկղը, որի բանալին մօտս լինելու պատճառով, կինս հրաժարվում է, իսկ նրանք գիւղիս տանուտէրի օգնականին ստիպում և կոտրել են տալիս սեղանս ու բացում արկղը, որտեղից վերցնում են մի քանի անկասկածելի նամակներ, որոնց հետ և Մարց գիւղացիների ինձ ուղղված նամակները: Այդ հանգամանքը ես վերագրում եմ Ռոստոմ Թումանեանի ինտրիգներին: Այդ բաւական չէ, այժմ էլ լսում եմ, որ Ռ. Թումանեանը դիմել է և խնդրել գաւառապետին, որ միջնորդի պ. նահանգապետին Թիֆլիս աքսորել ինձ ևս մեր կողմերից, որպէս վնասակար մարդու, ինչպէս առանց քննութեան կարողացաւ պաշտօնանկ անել տալ Դսեղի տանուտէր Պետրոս Վանեանին, Լոռուտի ուսուցչին և նոյն գիւղի 90 տարեկան գառամեալ քահանայ Մելիքեանին, որոնք ևս հակառակ էին իր անժողովրդական արարքներին:

Վարդան Տէր-Գրիգորեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊՐՕՖԷՍՈՐ Ա. Լ. ՊՈԳՕԴԻՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

(Ռուս-գերմանական յարաբերութիւնները և հայկական հարցը)

«Пріазовскій Край» թերթում տպված է պրօֆ. Պոգօդինի՝ Նոր-Նախիջևանում կարդացած դասախօսութեան բովանդակութիւնը, որը թարգմանաբար առաջ ենք բերում:

Բալկանեան պատերազմից յետոյ, Եւրոպական Թիւրքիայի վերացումով, հայկական հարցը մտնում է զարգացման մի նոր շրջան: Եւրոպական պետութիւնների՝ Թիւրքիայի վերաբերմամբ գործադրած յարձակողական-նուաճողական քաղաքականութիւնը, զրկվելով Բալկաններում տեղ գրաւելուց, իր ազդեցութեան ծանրութիւնը փոխադրեց Փոքր-Ասիա, և այսօր, չը նայած Մերձաւոր-արևելեան հարցը արտաքին կերպով հարթված է, բայց, դրա հետ միասին, Թիւրքիայի բաղդով շահագրգռված պետութիւնների անտեսական անտագոնիզմը առանձնապէս զգալ է տալիս իրան: Եւրոպական խաղաղութեան բաղդը կախված է փոքր-ասիական հարցի բարեյաջող լուծումից:

Թիւրքիայի բաղդով առաւել շահագրգռված պետութիւնները հանդիսանում են Ռուսաստանը և Գերմանիան: Առաջինը, որպէս սահմանակից պետութիւն, ձգտում է արտաքին շուկայ ձեռք բերել, երկրորդը մըտահոգված է այն ցանկութեամբ, որ իր երկրացիներին բնակեցնի Փոքր Ասիայում և դրանով վերջ ի վերջոյ, վերջինիս հպատակեցնի իրան: Սրանից պարզ է, որ հայկական հարցը կարող է ուղիղ լուծում ստանալ, եթէ նա քննվի ռուս գերմանական յարաբերութիւնների տեսակէտից:

Գերմանացիների ձգտումների պարզաբանութեան խնդրում արտակարգ ծառայութիւն է մատուցել գերմանական մամուլը, որտեղ ռուսական հարցը գերիշխող դիրք ունի: Այստեղ խիստ աչքի են ընկնում երկու հոսանք—minimum և maximum պահանջներով: Maximum պահանջը առաջադրվում է գերմանական շովինիստների կողմից, որոնք Ռուսաստանի ամեն մի աջողութեան մէջ տեսնում են Գերմանիայի կործանումը: Այսպէս օրինակ, Ռուդոլֆ Մարտինի 1907 թ. հրատարակած «Վիլհելմ II և Ռուդոլֆ VII» գրքում, ցոյց տալով այն ժամանակվայ Ռուսաստանի թոյլ դրութիւնը, խորհուրդ է տալիս օգտվել մոմենտից և մի անգամ ընդ միշտ հաշիւ վերջացնել գերմանական ժողովրդի «նախկին սուվերէնի» հետ: Բայց 1911 թւին արդէն Բերնհարդի լուրջ երկիւղ է կրում Ռուսաստանի ույժից, չը նայած որ վերջինս չի պատրաստվում պատերազմելու: Նա խորհուրդ է տալիս, քանի ուշ չէ, հաշիւ վերջացնել Ֆրանսիայի հետ, յետոյ զբաղվել Ռուսաստանով: Բերնհարդի իր այդ նկատառումը հիմնաւորում է նրանով, որ «գերմանացիներին անհրաժեշտ է աշխատանքի բոլոր երկրներում գաղութներ ունենալ»:

Այնուհետև դասախօսը մանրամասն կանգ առնելով գերմանական և ռուսական շահերի, Արևմտեան Եւրոպայում, Ռուսաստանում, Բալկանեան Թերակղզում, Պարսկաստանում և Հեռաւոր Արևելքում իրար հետ ընդհարվելու հարցի վրա, յայտնեց, որ ինքը հեռու է գերմանական ժողովրդին արհամարհելու մտքից, մի ժողովուրդ, որ փառաւոր է և բարձրակիրթ: Նա ի նկատի ունի միայն ղեկավարող քաղաքական շրջանները, առանձնապէս վիլհելմականները: Նրանց և նրանց քաղաքականութեան հետ կռւելու մասին պէտք է մտածել: Այդ տեսակէտից դասախօսը կարևոր և անյետաձգելի է համարում Փոքր-Ասիայի հայերին ռուս պետութեանը մօտեցնելը՝ ազգային հողի վրա համաձայնութիւն կայացնելու ճանապարհով: Այդ համաձայնութիւնը, պրօֆ. Ա. Լ. Պոգօդինի կարծիքով, կատարելապէս համապատասխանում է հայ ժողովրդի կուլտուրա-տնտեսական ձգտումներին և բղխում է հայ-ռուսական անցեալ յարաբերութիւններից: Իսկ Գերմանիային՝ իր Փոքր-Ասիայում ունեցած տնտեսական-գաղութային քաղաքականութեամբ, դասախօսի կարծիքով, չի աջողվի դէպի իրան գրաւել հայ ժողովրդի համակրանքը:

ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Հեռագրական տեղեկութիւնների համաձայն, պարլամենտական ընտրութիւնները Ֆրանսիայում անփոփոխ թողեցին պատգամաւորների պալատի նախկին քաղաքական կազմը: Վերընտրված են բոլոր խոշոր պարլամենտական գործիչները և կուսակցութիւնների պարագլուխները, բոլոր պատգամաւոր մինիստրները:

Նախկին մինիստր Կայօն ընտրված է 12,000 ձայնով ընդդէմ իր հակառակորդի, որը ստացել է 10,000 ձայն: Կայօյի ընտրութիւնը առաջ է բերում ցոյցեր. տեղի են ունենում ընդհարումներ նրա կողմնակիցների և հակառակորդների միջև:

Մեծ աջողութիւն ունեցան ընտրութիւններում սօցիալիստները՝ Ժ. Ժօրէսը, Ժիւլ Գէդ, Է. Վայան: Աջակողմեան մամուլը վհատված է ձախակողմեանների յաղթանակով:

Ընտրված պատգամաւորների մեծամասնութիւնը երեքամեայ զինուորական ծառայութեան կողմնակից է. կողմնակից է նաև մեծամասնութիւնը եկամտային հարկի, բայց մի մասը հակառակ է եկամտային յայտարարութիւնները ադմինիստրացիայի կոնտրոլին ենթարկելուն: Թէ ինչպէս է վերաբերվում մեծամասնութիւնը ընտրողական ռեֆորմին՝ դեռ որոշ պարզված չէ, միայն կարծվում է, որ պրօպօրցիոնալ ներկայացուցչութեան կողմնակից է:

Այսպէս, միապետականների յոյսերի հակառակ, որոնք կարծում էին, թէ Կալմէտի սպանութիւնից յետոյ կը կերպարանափոխվի պարլամենտի կազմը, պատգամաւորների պալատը ունենալու է դարձեալ զուտ հանրապետական բնաւորութիւն:

Թէև մինչև տեղի չունենան կրկնաքուէարկութիւնները, դժուար է պարզ որոշել կուսակցութիւնների քանակը, բայց հաստատ կարելի է ասել արդէն, որ ոչ մի ֆրակցիա չէ ունենալու ճնշող մեծամասնութիւն և որ ապագայ պալատում կը ստեղծվի նախընթաց ձախակողմեան բլօկի կառավարական մեծամասնութիւն:

Կրկնաքուէարկութիւններին գրեթէ ամեն տեղ արդէն ապահովված է արմատականների և սօցիալիստների փոխադարձ աջակցութիւնը:

Նկատվում է նոյն թշնամական վերաբերմունքը «միացեալ արմատականների» և «ձախակողմեանների ֆեդերացիայի» միջև, ինչպէս և նախընթաց պալատում: Տարաձայնութիւնների նիւթն է երեքամեայ զինուորական ծառայութիւն, եկամտային հարկ և ընտրողական ռեֆորմ: Պէտք է ասել և այն, որ կռիւը կուսակցութիւնների միջև յաճախ ծրագիրների, քաղաքական պլատֆորմների տարբերութիւնը չէ, այլ զուտ անձնական յարաբերութիւնների արդիւնք:

Այս պայմաններում, արմատականները կառավարական մեծամասնութիւն ստեղծելու համար պէտք է յարեն սօցիալիստներին. իսկ այդ մեծամասնութիւնը մի մշտական, կայուն պարլամենտական մեծամասնութիւն չի լինի:

Պարլամենտարիզմի ուսմունքի համաձայն, կառավարութիւնը պէտք է պարլամենտական մեծամասնութեան արտայայտիչը լինի. այդպիսի պարլամենտական մեծամասնութիւն վաղուց է չը կայ ներկայ Ֆրանսիայում. կան կուսակցութիւնների և շահերի կօալիցիաներ, բայց դրանք ժամանակաւոր, խախուտ կոմբինացիաներ են: Այդ պայմաններում կառավարութիւնը չէ կարող հանգիստ գործել, որովհետև կը փոխվեն տրամադրութիւնները և կառավարութիւնը ստիպված կը լինի հրաժարական տալ, կիսատ թողնել նախագծված ռեֆորմները սօցիալական կեանքի շինարարութեան ասպարէզում:

Հանրապետական կուսակցութիւնների բաժանումները մեծ դժուարութիւններ են ստեղծում կառավարութեան առաջ, և այդ է պատճառը, որ պալատի անցեալ չորսամեայ գոյութեան ընթացքում տեղի ունեցան ութ մինիստրական կրիզիսներ, կառավարութիւնը ութ անգամ փոխվեց: Այդ պայմաններում կառավարութիւնը չէ կարող հանգիստ լինել վաղվայ օրվայ համար. իսկ ներկայ կառավարութիւնը, Դումէրգի արմատական կաբինէտը մեծ դեր ունի կատարելու Ֆրանսիայի սօցիալական օրէնսդրութեան ասպարէզում—աջողեցնել եկամտային հարկ նշանակել բոլոր կապիտալների վրա, պարտադիր կոնտրօլի իրաւունքով, և իրագործել ընտրողական ռեֆորմը:

Ս. Դ.—Բ.

ՀԻՒԾՈՒԱԾՈՒԹԻՒՆՆ

ու նիհարութիւնը, եթէ առաջացած է թոքախտից, սիֆիլիսից եւ կամ այլ քրոնիկական հիւանդութիւններից, նէվրաստենիան եւ ջղային հիւանդութիւնները, սեռական թուլութիւնը, սրտի հիւանդացումները, զառամութիւնը մեծ աջողութեամբ բժշկում է Սպէրմին-Պէլը, որի մասին վկայում են աշխարհիս ամենայայտնի բժիշկների բազմաթիւ դիտողութիւնները գրականութեան մէջ:

Սպէրմին-Պէլը միակ իսկական, բազմակողմանի փորձված Սպէրմինն է. այդ պատճառով էլ պէտք է ուշադրութիւն դարձնել „ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ“ անուան վրա և չը գնել կեղծվածները, հեղուկներ և սերմային գեղձերից պատրաստված մահրամներ, որպէս անպէտք նմանողութիւններ, որոնք թէ յատկութեամբ և թէ ներգործութեամբ Սպէրմին-Պէլի հետ ոչ մի առնչութիւն չունեն և յաճախ պարունակում են առողջութեան համար վնասակար տարրեր:

Ցանկացողներին ուղարկվում է ձրիաբար «Цѣлебное дѣйствіе Спермина» գիրքը. ամբողջ օրգանօթէրապիայով հետաքրքրողներին ուղարկվում է՝ 4 հատ 7-կոպէկանոց նամականիշ ստանալուց յետոյ՝ նոր լոյս տեսած «Цѣлительныя силы организма» գիրքը:

Սպէրմին-Պէլին կայ ամենուրեք:

Профессоръ Д-ръ ПЕЛЬ и С-вья С.П.Б.

Մատակարար Նորին Կայսերական Մեծ. Դրան

№ 4 (М. 8663) 0—3

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԵՐՐԵԱԿ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

Դումէրգի յայտարարութիւնը.— Ֆրանսիական մինիստր-նախագահ Գաստոն Դումէրգ, անգլիական թագաւորի Պարիզից մեկնելուց յետոյ, իր մօտ ընդունած ժուռնալիստներին հետևեալ յայտարարութիւնն արեց.

— Սըր Էդուարդ Գրէյի համաձայնութեամբ մամուլին տրված պաշտօնական հաղորդագրութիւնը, տեսակցութեան հետևանքների առիթով, պարզ կերպով որոշում է ներկայ դէպքում Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի միջև գոյութիւն ունեցող յարաբերութիւնները: Հաւատացէք ինձ, այդ պաշտօնական հաղորդագրութեան բոլոր խօսքերը կշռված են: Գրէյի հետ ունեցած մեր խորհրդակցութեան ժամանակ առանց բացառութեան ամեն տեսակ հարց, որ հետաքրքրում է անգլիական և ֆրանսիական դիւանագիտութեան, մանրամասն քննութեան ենթարկեցինք: Մեր հայեացքների միջև միանմանութիւն երևաց: Եւ ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, քանի որ երկու ազգութեան շահերը աշխարհի բոլոր մասերում միանգամայն համապատասխանում են իրար: Շատ բնական է, որ մեր խօսակցութեան ժամանակ, շօշափէինք և ռուսական դիպլօմատիայի դերը: Պետերբուրգը, Լօնդօնը և Պարիզը կոչված են իրանց գործունէութիւնը իրար միացնելու: Դուք կարող էք յայտնել, որ դեռևս երրեակ համաձայնութիւնը այնքան լուրջ և հաստատ չէ եղել, ինչպէս այժմ: Նա գործում է յօգուտ եւրոպական հաւասարակշռութեան և ընդհանուր խաղաղութեան, որը կախված է այդ հաւասարակշռութիւնից: Մեր հոգսն է՝ պահպանել իւրաքանչիւր պետութեան շահերը, որ մտնում են համաձայնութեան մէջ, և ապահովել խաղաղութիւնը: Նոյնպէս հաւատացէք ինձ, որ ֆրանս-բրիտանական հանդէսները միայն միակ պայծառ միջադէպ չէ՝ առանց վաղվան օրի: Ինձ յայտնի է, որ թագաւորը և թագուհին անկեղծօրէն զգացվել են Պարիզում արված ընդունելութիւնից. ես միայն պաշտօնական ընդունելութեան մասին չեմ խօսում, այլ Պարիզի ազգաբնակութեան ցոյց տուած ընդունելութեան մասին: Այդպիսի ընդունելութիւններ չի կարելի վերևից թելադրել: Հասարակութիւնը մեծ դիւանագէտ է, և նրա ձայնը գեղեցիկ ապացոյց է ծառայում այն բանի, որ entente cordiale-ը խոր արմատներ է թողել երկու երկրում էլ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ԿԱՐՍ, բժիշկ Ալեք. Ապանեանին.—Ձեր յօդուածն ստացված է ժամանակին և կը տպվի «Մշակում» իր հերթին:

ԱԼԷՔՍԱՆԴՐԻԱ, Հ. Տէր-Մկրտիչեանին.—Ձեր ակնարկած յօդուածներն ստացված են և նրանցից առաջինը տպված է արդէն «Մշակում», իսկ միւս յօդուածը լոյս կընծայենք շուտով:

ՍԵՒ-ՔԱՂԱՔ, Ռուբէն Հայկունուն.—Ձեր նամակը չենք կարող տպել, որովհետև վճռել ենք մի անգամ ընդմիշտ տեղ չը տալ այն գրութիւններին, որոնք մեզ ուղղվում են որպէս հերքումն Թիֆլիսում հրատարակվող մի հայ թերթում լոյս տեսնող լուրերի:

Խմբագիր-հրատարակիչ՝

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴԻԼԻՋԱՆՈՒՄ մայիսի 4-ին նշանակված է աճուրդ ամառվայ սէզօնի համար, ռոտօնդայի նորոգառոյց և անտառի բուֆէտների համար: Ցանկացողները հրաւիրվում են մասնակցելու աճուրդին յիշեալ օրը բանաւոր և փակ ծրարներով:

Խորհուրդ

(օ. մ.) 368. 4—1

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

ՓՈԽԱԴՐՎԵՑ նոր բնակարան Սօլօլակում, Բէբուտօվսկայա փող. № 38.

Ներքին և երեխաների հիւանդ., մասնագէտ ստամոքսային և աղիքային հիւանդ.: Էլեքտրօթէրապիա: Ընդունելութիւնը առ. ժամը 10—11-ը և երեկ. ժամը 5—7-ը:

Տելէֆօն № 388.

(ա. օ.) 112. 100—53

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

Նախկին օրդինատօր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի: Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան- առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմեօնօվսկայա փող., № 18 (Վօրոնցօվի արձանի մօտ) առանձնապէս հիւանդների համար յարմարեցված բնակարանում: Բժշկի բնակարան Սեմեօնօվսկայա, № 16.

(չ.ու.կ.) 804. 100—83



ՄԱՐՄԱՐԷ-ՄՕԶԱՅԻԿ

և

ԳԵՂԱՐ.-ԱՐՁԱՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ

Ա. ՐԻՑՑԻ

Ընդունվում են պատուէրներ ամեն տեսակ արձանագործական և շինարարական աշխատանքների՝ ինչպէս իսկական, նոյնպէս և արհեստական քարերից և մօզայիկներից: Արհեստանոցում մեծ քանակութեամբ կան իտալական-կարրարեան մարմարից յուշարձաններ, ֆիգուրաներ և կարասեղէնի համար սալատակներ, նոյնպէս և ամեն տեսակ յուշարձաններ գրանիտից, լաբրադօրից և տեղական քարերից:

Լուսանկարչական պատկերներից կամ բնականից առնվում պատուէրները՝ մարմարէ և բրօնզեայ բարելիէֆների, կիսանդրիների և ֆիգուրաների համար—ընդունվում են առանց կանխավճարի:

365. 5—1

Թիֆլիսի Նաւթարդիւնաբերական Ընկերութեան ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով պատիւ ունի հրաւիրելու պ. պ. բաժնետէրերին տարեկան ընդհանուր ժողովի, որ կայանալու է ներկայ 1914 թւի ապրիլի 30-ին, չորեքշաբթի օրը, երեկոյեան ժամը 7½-ին, Ընկերութեան գրասենեակում, Սօլօլակսկայա փող., տուն Արաֆօլօվի № 9.

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ.

1) Անցեալ 1913 թւի հաշւի և հաշւեկշռի քննութիւնն ու վաւերացումը, վարչութեան և վերստուգող յանձնաժողովի զեկուցումների հետ, նոյնպէս ծախսերի նախահաշւի և Ընկերութեան գործունէութեան ծրագրի քննութիւնը 1914 թւի համար:

2) Վարչութեան մէկ բացակայ և մէկ ըստ հերթի դուրս եկող անդամների ընտրութիւնները (§ 9):

3) Վերստուգող յանձնաժողովի երեք անդամի և երեք փոխանդամի ընտրութիւնը (§ 21):

Եթէ ժողովը սահմանված ձայների քանակութեան բացակայութեան պատճառով չը կայանայ, երկրորդ անգամ նշանակվում է նոյն տեղը, մայիսի 4-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը 11-ին, որը կը համարվի կայացած, ի նկատի չառնելով ձայների քանակութիւնը (§ 29):

(25, 30) 329. 3—2

ՄԱՐՄԱՐԷ-ՄՕԶԱՅԻԿ և ԱՐՁԱՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ

Բ. Պ. ՎԻԼԼԱՅԻ

Թիֆլիս, Միխայլօվսկի պր., № 63, սեփական տ.: Տելէֆօն 6—20.

ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ

մարմարեայ, քարէ եւ մօզայիկ աշխատանքների համար:

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

պատրաստի արձաններ լաբրադօրից և տեղական կարրարեան մարմարից:

Ծեփումն շինութիւնների ֆասադի—արհեստական քարով:

(չ.ու.կ.) 271. 10—5

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՈՒՂԱՐԿՎԵՑ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ

ՆՈՐ-ՀՈՍԱՆՔ

№ 4—ապրիլ 1914 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

1) Ազատութեան արշալոյսին (վերջ)—Արա-ս, 2) Բաբա Թահէր—թարգմ. բնագր. Յ. Զ. Միրզայեան, 3) Իմ բարեկամները—Վ. Պետրոսեան, 4) Երգչի վիշտը (բանաստ.)—Յովհ. Թումանեան, 5) Նորան—Գ. Մեսեան, 6) Կինը—Լէյլի, 7) Քաղցածներ—Ռէն, 8) Յուշեր Տաճկա-Հայաստանի ճանապարհորդութիւնից—Ա.-Դօ, 9) Քննադատական փիլիսոփայութիւն (Կանտի կեանքը և անձնաւորութիւնը)—Ե. Ֆրանգեան, 10) Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում, 11) Աշխարհաբարը և աշխարհիկ գրակ. մինչև Խ. Աբովեան—Մար. Յարութիւնեան, 12) Ալֆրէդ Ռօլլէս—Աւետիք Տէր-Պօղոսեան, 13) Գրախօսութիւն. ա) Ատոմ Յարճանեան (Սիամանթօ) Սուրբ Մեսրոպ (Կովկասեան հրատ.)—Մ. Յար., բ) Արմէնուհի Տիգրանեան (Մենուհի) Բանաստեղծութիւններ՝ Ն. Աղբալեան, գ) Գ. Մեսեան—Քաւոր Գաբրիէլը—Und Doch, դ) Գ. Ք. Գօրգեան՝ կարկուտ—Und Doch, 14) Վրաց կեանք—Բ.-Տ, 15) Թիւրքիա—Տաճկական ռեֆորմները—Ռուբէն, 16) Նամակներ Պարսկաստանից. Պարսկաստանի զինուորական ուժերը—Ֆարրօ, 17) Աշխատաւորական կեանք—Գերմանիա, Անգլիա և Հոլլանդիա—Ան. Փանոսեան, 18) Բովանդակութիւն, 19) Յաւելուած. Չեզար Լոմբրօզօ—Հանճար և Ցնորումն, իտալերէն բնագր. թարգմ. Յ. Ճերմակ, 20) Պատկերներ. 1) Էմմանուէլ Կանտ, 2) Ալֆրէդ Ռօլլէս և 3) Չեզար Լոմբրօզօ:

Շարունակվում է 1914 թ. բաժանորդագրութիւնը

Խմբագրութեան հասցէն. Тифлисъ, Редакція «Норъ-Осанкъ», Сергіевская № 14. Արտասահմանից՝ Tiflis (Russie, Caucase) Rédaction de la revue «Nor-Hossank».

(հ. կ.) 366. 3—1

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный